№ № 17-18 1 ՆՈՅԵՄԲԵՐ 1895

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ԿՈՒԼԵ՛ՆՔ, ԿՈՏՈՐՈՒ՛Մ ԵՆ

—

Դարձե՛ալ կոտորած, դարձե՛ալ ջարդ։

Սուլթանի կառավարութիւնը այժմ էլ Տրապիզոնն ու շրջակայքն է աւերակ դարձրել, հայ բնակիչները կոտորել, սրի անցկացրել։ Տեղի ունեցած սարսափները, կոտորածն ու աւերումը աւելի սոսկալի են եղել, քան ենթադրւել էին. հայերը իրենց դահիճների կատաղեալ տրամադրութեան տակ են եղել և դահիճը կոտորել մորթոտել է, այրել-աւերակ է դարձրել։

Մարդկային լեզուն ո՛չ մի այժ չունի ներկայացնելու տեղի ունեցած սարսափները. հարկաւոր է աւելի քան հարեմական կեանքով, ներքինների ու ուլամների հոգով սնուած արևելցու վառ երևակայութիւնը, որ պատկերացնի այն վայրենի գազանային սարսափը, այն տէրրորը, որին ենթարկուած են եղել Տրապիզոնի և շրջակայքի հայերը, տէրրոր, որ ունեցել է իւր ամենաազատ ասպարէզը՝ սանձարձակ գործելու, որքան պահանջում էր ներքինների ու ուլամների սան սուլթանի լեշակեր, արիւնախում կառավարութիւնը, վրէժխնդիր լինելու, պատժելու ապստամբ հայերին, որ սպառնում են իրեն ոչնչացնելու։ Եւ նա կատաղեալ յաջողութիւն ունեցաւ Տրապիզոնի կոտորածում, նա այդ տեղ իւր նպատակին գրեթէ հասաւ. —չկայ մի հայի տուն, որ արիւնոտուած չլինի, չկայ մի հայ ընտանիք, որ իւր անդամներից կորցրած չլինի, չկայ քաղաքում ու շրջակայ հայաբնակ գիւղերում մի կէտ, որ հայի արիւնով արիւնոտուած չլինի... արի՛ւն, ամե՛ն տեղ արիւն... Սարսափ է, որ տարածում է սուլթանի կառավարութիւնը՝ կոտորած անելով, հայ ազգաբնակութեանը տէրրորի ենթարկելով.—կոտորած ներքին նահանգներում, կոտորած Փոքր-Ասիայում, կոտորած Պոլսի շրջակայքում. սուր է, որ շողշողում է, գլուխ է, որ ընկնում է, գընդակ է, որ հարւածում է, մարդ է, որ գետինն է փլուում։ Սա մի աներևակայելի մարդկային սպանդանոց է, սա մի աներևակայելի տէրրոր է, որ, իբրև մի համաճարակ, ամբողջ երկիրն է բռնել։ Սուլթանի կառավարութեան սուրը աւելի քան իւր դերումն է և նա անինչայ, աջ ու ձախ կոտորում, մորթոտում, ջարդ է տալիս հային, մոլեռանդ, կոյր, ոխակալութեամբ ու ատելութեամբ սնեցրած ու նախապատրաստած տաճիկ ամբոխի միջոցով, նրա թիկունքին նստած։ Սուրը գլխաւորապէս ամբոխի ձեռքին, բայց նրա ձեռքում սուր դնողը ինքը կառավարութիւնն է, խփողը ամբոխն է, բայց օրինակ տուողը ինքը կառավարութիւնն է. իսկ Տրապիզոնի ջարդում, նա՝ կառավարութիւնը ափ-աշկարա հրապարակի վրայ էր և, իբրև զօրապետ, ղեկավարում էր ջարդը. ամեն բան կառավարութիւնն է, իսկական դահիճը, ոճրագործը, մարդասպանը նա է, սուլթանի պոռնիկ կառավարութիւնը։

Տեղի ունեցող ամենօրեայ կոտորածը, սարսափները հաստատում են՝ սուլթանի կառավարութիւնը անշեղ կերպով ու հաստատուն քայլերով դիմում է իւր նպատակակէտին—ոչնչացնելու իրեն վտանգ սպառնացող տարրը, հայ ժողովուրդը։

Այս վաղուց յայտնի էր և մենք նախազգուշացրել ենք հայ ժողովրդին կոտորածի վտանգից, հրաւէր կարդալով՝ չխնայել ոչ մի միջոց զինելու տաճկահայ եղբայրներին, թէ ինքնապաշտպանութեան և թէ կուելու իւր ազատութեան համար։

Եւ այսօր տեղի ունեցող սարսափների իսկական հեղինակը ու իրաւաբանական պատասխանատուն թէև սուլթանի կառավարութիւնն է, բայց բարոյականը ինքը՝ հայ ժողովուրդն է։ Եթէ այսօր տէրրորի ենթարկուած տաճկահայ ժողովուրդը զէնք չունի թշնամու դէմ պաշտպանուելու, եթէ նրան ջարդում, մորթում են, բարոյական պատասխանատուն ինքը՝ հայ ժողովուրդն է և հոսող արեան կաթիլներից մի քանիսը կարող են նրա ճակատին ընկնել...

Զէ՛նք, զէ՛նք են բղաւել, սպառնացող կոտորածի վտանգը ու արհաւիրքը իւր ժամանակին ներկայացրել

ու օգնութիւն են կանչել, բայց Տաճկահայաստանից դուրս հայ ժողովուրդը աչքերը յառել էր դիպլոմատիային, ամեն բան նրանից էր յուսում, նրա պաշտպանութեան էր դիմում։ Ահա՛ և նրա պաշտպանութիւնը—կոտորած Երզնկայ, կոտորած Պոլիս, կոտորած Տրապիզոն և շրջակայքը, կոտորած Ագիսար, կոտորած, ինչպէս հաղորդում են հեռագիրները՝ Մուշ, Կարին, Հալէպ և նորից Երզնկայ. վտանգ է սպառնում Վանին և բոլոր այն տեղերին, ուր հայ կայ, և թո՞ղ այդ դիպլոմատիան պաշտպանի, ինչո՞ւ նա չի պաշտպանում, ինչո՞ւ է թողել անզէն ժողովուրդը գազանի ճիրաններում, որ յօշոտում, պատառ պատառ է անում... Ո՞ւր է, ո՞ւր այսօր այդ դիպլոմատիան, ո՞ւր են մարդասէրներն ու հայասէրները։

Չկա՛յ ոչ ոք, հայ ժողովուրդը մենակ է, բոլորովին մենակ, անզէն, անպաշտպան։ Այո՛, հայ թշուառ ժողովուրդը մենակ է ու անզէն, և ո՞վ է մեղաւորը. ինքը՝ Տաճկահայաստանից դուրս ապրող հայ ժողովուրդը, որ անտարբեր գտնուեց յեղափոխականների հրաւէրին ու իւր խաղաղ ուղեղով յարուեց դիպլոմատիային, որը... այո՛, մարդասէր է և այն աստիճանին, որ Տաճկահայաստանը, մարտիրոս ժողովրդի հայրենիքը, այսօր մի արիւնոտ դաշտ է ներկայացնում, որի վրայ ազատ ու անպատիժ, սանձարձակ թռիչքներ ու արշաւանքներ է անում հրէշը, անամօթ, գարշելի հեղինակը կոտորածի, հայ ժողովրդի լկտի ու տմարդ թշնամին—սուլթանի պոռնիկ կառավարութիւնը։

Հայ ժողովուրդ, բաւակա՞ն է վերջապէս, որ օրուայ համար ես ապրում և ինչո՞ւ. շարժի՛ր, օգնութիւն, ձե՛ռք տուր անպաշտպան եղբօրդ, զե՛նք տուր, միջոց տուր պաշտպանելու, կռուելու։

Տմարդ թշնամին պիտի՛ պատժուի, պէ՛տք է վրէժխնդիր լինել կոտորածների, սարսափների իսկական հեղինակից ու նրա հերոսներից։ Եւ մի՞թէ կարող է պատահել, որ հայի ընկած, յօշոտուած դիակով զարձացողը, նրա ընտանիքը բռնաբարողը ու անպատուողը, նրա տունը և ինչքը աւերողը, նրա արեան մէջ լողացողը անպատիժ մնայ. ո՛չ, նա պիտի պատժուի, պիտի՛ վրէժխնդիր լինել. իւրաքանչիւրը իւր ուժի, իւր կարողութեան համեմատ պիտի օգնի, պիտի գործի, այլևս յապաղելու չէ, տատանման բոպէն վաղո՞ւց պիտի անցած համարել։

Եւ դաւաճա՛ն, ոճրագործ է նա՛, որ ձեռները ծալած հանդիսատեսի դերը կը կատարի, իւր եղբօր արեան կաթիլները իբրև բիծ նրա ճակատին, որը անտարբեր կը լինի, եղբայրասպան է նա՛, որ օգնութեան չի հասնիլ։

Կո՛ւ է, մորթո՛ւմ են, կուե՞նք։

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՋԱՐԴԸ

I

ԲԱՀՐԻ ՓԱՇԱՅԻ ԶԱՐԿՈՒՄԸ. ՍՈՍԿԱԼԻ ԿՈՏՈՐԱԾ ՏՐԱՊԻԶՈՆՈՒՄ. ԱՅՐՈՒՄՆ ՇՐՋԱԿԱՑ ՀԱՅԱՐՆԱԿ ԳԻՒՂԵՐՈՒ

—

Շտապում եմ գրել առ այժմ երկտողս, գրելիք շատ կայ, բայց դրութիւնս չի ներիր. մանրամասնութիւնք յառաջիկային.—

Սեպտ. 20-ին (Հ. տ.) Հայ Յեղ. Դաշնակցութեան երկու ահաբեկիչներ քաղաքիս արքունական Մեծ ճամբու վրայ, ժամը 11-ին երեկոյեան, ռէվոլվէրի հարուածներով վիրաւորեցին Վանի նախորդ կուսակալ, արիւնարբու գազան Բահրի փաշան և քաղաքիս զինուորական հրամանատար Ֆէրիդ փաշան. երկուսն ալ ոտքէն։ Անմիջապէս հալածեցին ահաբեկիչները, որք սակայն նոյն վայրկենին աներևութացան և մինչև այսօր՝ հակառակ խիստ խուզարկութեանց, շնորհիւ վեհ. սուլթանին, երևելի չեղան։

Սարսափը շատ ազդու եղաւ Թուրք կառավարութեան և խուժանին վրայ։

Երկու օր վերջ, Սեպտ. 22-ին, ուրբաթ գիշեր, ժամը 2-ին, ամբողջ Թուրք խուժանը ոտքի ելաւ հայերը կոտորելու։ Սակայն առաջին յարձակումին մէկ մարդ վիրաւորելով, չհամարձակեցան գործի ձեռնարկել. բայց և այնպէս մինչև ժամը 6-ը հազարաւոր Թուրքերու վայրենի գոռուն-գոչիւնները և ռէվոլվէրի ու մարթինների պայթիւնները տևեցին, ահ ու դողի մէջ ձգելով ամբողջ քրիստոնեայ ազգաբնակութիւնը։ Այն գիշեր ո և է պահապան զինուոր չերևցաւ յարձակման վայրերը. այնպէս որ հայ ժողովուրդը վախնալով, որ կառավարութիւնն ալ մասնակից է եղած յարձակման, հետևեալ օրը բոլոր խանութները գոցեցին և սկսան քիչ շատ պաշտպանել՝ հաւանական կոտորածի մը դիմագրաւելու համար։ Նոյն օրը առաջնորդարանէն դիմելով կուսակալ Գատրի պէյին՝ ապահովութիւն պահանջեցին. այդ խոզագլուխ գազանը ամեն կերպ ապահովութիւն խոստացաւ, որ երբէք հայոց դէմ ո և է անախորժ բան տեղի չպիտի ունենայ և վերջացուց խօսքը, ըսելով՝ „Ձեզ վնասելու համար իմ մարմնիս վրայէն պէտք է անցնին“։

Անկէ աւելի հանդիսաւոր խոստում և պաշտօնական

ապահովութիւն չէր ըլլար։ Հիւպատոսական մարմինն ալ միևնոյն հանդիսաւոր խոստումը լսեց և սկսաւ ապահովութիւն ներշնչել իրեն դիմող սարսափահար հայերուն. իսկ ռուսական հիւպատոսն կը վռնտէր իրեն դիմող հայերն, ըսելով թէ՝ „Ի՞նչ եղաւ, որ ինձի կուգաք. ձեր ըրած չարութիւնները ի՞նչ են, Պոլսոյ մէջ ըրածնիդ մոռցա՞ք. հայոց համար Քօմիսէր նշանակուեցաւ Շաբիր փաշան, ինչո՞ւ անով գոհ չէք ըլլար“։

Որչափ որ առաջնորդարանէն և հիւպատոսներէն՝ „բան չկայ, բան չկայ“ կը յայտարարուէր հայ ժողովրդին, սակայն իրողութիւնը հակառակը ցոյց կուտար։

Շուկայի Պիթ-Պազար կոչուած մասին մէջ, թուրք սրիկաները երկու երեք օր շարունակ հրազէն կը գնէին, իսկ շուկային երկու բերանները կեցած փոլիսներ կարդելէին հայերուն զէնք գնել և անցնողներն ալ կը խուզարկէին և գտած զէնքերնին կառնէին։ Միւս կողմէն շրջակայ թուրք գիւղացիներ խումբ խումբ քաղաք կը դիմէին։ Ժողովուրդը միշտ առաջնորդարան կը վազէր՝ թուրքերու սպառնական շարժումները իմացնելու. փոխանորդը և քաղաքային ժողովոյ անդամներէն կուսակալին կը դիմէին և մատնանիշ կընէին իրողութիւնները։ Կուսակալը իւր սովորական կեղծաւորութեամբ կը հանգստացնէր զանոնք և յետ կը ճամբէր։ Կիրակի օրն ալ ահ ու դողի մէջ անցաւ։ Հայ, յոյն և թուրք, ամենն ալ գոցած էին կրպակներն։

Երկուշաբթի առաւօտ մեռաւ ուրբաթ օրը յարձակման միջոցին վիրաւորուած Սապրի անուն թուրքը։ Թուրք խուժանին գրգռումը սաստկացաւ և նոյն օրը անխնայ ծեծելով հայ կաթոլիկ զինավաճառ Յովսէփը, բանտարկեցին։ Կառավարութեան կողմէ յոյներուն գաղտնի պատուէր տուեցաւ՝ հայ չպահել տուներնին։ Նոյն օր, երեկոյեան կողմ կուսակալ Գատրին՝ կանչելով փոխանորդն ու հայ առաջաւորներ, իր կեղծաւորի դիրքը մէկէն ի մէկ փոխեց և պահանջեց երկու ահաբեկիչ հերոսները, եթէ ոչ, ըսաւ՝ „ապահովութեան երաշխաւորութիւն չեմ տար“։ Մերոնք խելքերնին կորուսած, եկան առաջնորդարան և յետ երկար խորհրդակցութեան, որոշեցին պատասխանել կուսակալին՝ թէ „իրենք թէև պարտաւոր չեն յանցաւորները գտնելու, բայց եթէ գիտան տեղերնին, կառավարութեան կը տեղեկացնեն։ Կայսր. կառավարութիւնը ինք կարող է իւր միջոցներով այդ յանցաւորները ձեռք անցունել և պատժել. իսկ եթէ կառավարութիւնը, հակառակ հայ ժողովրդեան տածած յոյսին և վստահութեան, անկարող է կամ չուզեր պաշտպանել հայ հաւատարիմ հպատակները, հայ ժողովուրդը ինքզինքը կը յանձնէ նախախնամութեան կողմէ գտնուած ճակատագրին“։

Այդ մտքի ծանուցագրեր ալ առաջնորդարանէն նոյն օր ղրկուեցան բոլոր հիւպատոսներուն, խնդրելով անոնց ալ պաշտպանութիւնը։

Բայց կուսակալին այդ սպառնալիքը չտարածուեցաւ ժողովրդեան մէջ և խելահասներն ալ կարծեցին, թէ կառավարական խաղ մըն է՝ ահաբեկիչները կերպով մը գտնելու համար։

Խեղճերը չէին գիտեր՝ թէ շաբաթէ մի վեր ի՞նչ սոսկալի խաղ մը կը պատրաստուէր հայոց գլխուն։

Կուսակալ, Ալայ պէյ և Քօմիսէր երբ մէկ կողմէն շաբաթէ ի վեր հայերուն ապահովութիւն կը յայտարարէին, անտի նոյն մարդիկ և մոլլաներ, հազար և մի սուտերով, առասպելներով կը գրգռէին թուրք խուժանը, որ վախէն տեղէն չէր կրնար շարժիլ, պատրաստուել և որոշեալ ժամուն յարձակուել հայոց վրայ։ Կառավարութեան կողմէ թուրք խուժանին տրուած գըլխաւոր գրգռումը սա էր՝ „Հայերը Անգլիայի հետ միացած մեր Օսմ. թագաւորութիւնը պիտի կործանեն, իսլամի կրօնքը պիտի ջնջեն և յառաջիկայ ուրբաթ օր ալ տեղիս հայերը զինուած պիտի յարձակուին մզկիթներու վրայ ու իսլամները պիտի կոտորեն, ուստի օր առաջ մենք շարժինք և չթողունք, որ անհաւատ հայերը մեզ ջարդեն“։

Յարձակման օր կը որոշուի Սեպտեմբեր 26, երեքշաբթի օրը։ Սրիկաները խումբերով կը բաժանեն և կառավարութիւնը հրացան, ռէվոլվէր, փամփուշտ ու այլ զէնքեր բաշխեց անոնց։

Երեքշաբթի օրը ցամաքի և ծովի փօստաները կը հասնին Տրապիզոն։ Այդ օրը գործի օր է, մանաւանդ վաճառականներուն։ Հայ վաճառականները ու խանութպանները՝ ապահովուած կառավարութեան խոստումներէն ու խաբուսիկ գիշերային հսկողութենէն, հիւպատոսներու և առաջնորդարանի ապահովիչ յայտարարութիւններէն, այն օր աւելի բազմութեամբ շուկայ իջան, գործերնին քիչ շատ կարգի բերելու, երբէք մտքէ չանցունելով, որ կառավարութենէ իրենց դաւ լարուած է։

Ժամը 6-ին էր, թուրք ամբոխը զէնքը ձեռքը սկսաւ դէպի հայոց բանուկ վայրերը խուժել։ Նոյն միջոցին զինուորական փող զարնուեցաւ և կանոնաւոր զօրքը իրեն օգնական ունենալով թուրք խուժանը, առաջին յարձակումը տուաւ Մէյդան-Շարդի կոչուած հրապարակին մէջ։ Կուսակալ Գատրին ալ շրջապատուած թուրք սրիկաներով շուկայէն հոն հասաւ և հրահանգներ տուաւ՝ մատնանիշ ընելով հայ հարուստները մասնաւորապէս սպանել։ Սկսան հանդիպող հայը զարնել։ Հրացաններու պայթիւնները քաղաքին ամեն կողմէն պայթեցան. խեղճ հայերը յանկարծակիի եկած և բո-

լորովին անպատրաստ, սկսան փախուստ տալ. ամեն անկիւնէ զինեալ Թուրքեր դուրս ելնելով՝ փախչողները չարաչար մեռուցին. շատ հայեր ալ կարծելով թէ յարձակումը խուժանէն է, վազեցին պահականոցը ապաստանելու, սակայն ամենն ալ զինուորներէն սպանուեցան։ Յոյներն ալ՝ վատաբար հետևելով իրենց գաղտնի տրուած պատուէրին, անգթաբար իրենց կրպակներու և տուներու դռները գոցեցին փախչող հայերուն երեսին և ոմանք ալ իրենց ապաստանած հայերը մատնեցին Թուրքերուն (բացառութիւններ մատով կը համարուին)։ Կառավարութիւնը՝ ուզելով գործին հայերու կողմէ եղած ապստամբութեան երևոյթ տալ, պատուէր տուած էր Թուրքերուն՝ միայն այր մարդիկը սպանելուստի ով որ կը փախչէր՝ „Թէսլիմ օլուն“ (անձնատուր եղէք) կը պոռային ետևէն, կարծես՝ թէ հայերը ապստամբեր էին և ճակատամարտ կը մղէին կառավարութեան դէմ։

Սակայն Թէսլիմ եղողն ալ, աղաչողն ալ, փախչողն ալ՝ ծեր, մանուկ, երիտասարդ, բազմաթիւ պանդուխտներ, մի քանի կանայք, առանց խտրութեան, Թրքասէրներն ալ, յեղափոխութեան թշնամիներն ալ, բոլորն անխնայ կոտորեցին, ջարդեցին, փշրեցին, այդ օրը առնւազն 300 հոգի։ Դրացի Թուրքը դրացի հային զարկաւ, արհեստակիցը իր արհեստակից հային, ամենն ալ կատղած գազաններ դարձեր էին. դիակներն իսկ կը յօշոտեն։

Թաղերու մէջ տեսարանը շատ աղէխարշ էր. կանայք, հարսեր, մատաղ տղայք գլուխնին կորուսած, ուր վազին՝ չեն գիտեր. ոմանք բարձր պատերէ վար կը թռչին, ոմանք կը մարին, նորատի հարսեր, մատաղաշ մանուկներն մէկ ձեռքերնին, միւս ձեռքովնին չուան բռնած ահագին բարձրութիւններէ վար կը սողային, տունը մնացած ծեր մարդիկ ածխանոց կը թաղուին, սոսկումը շատ մեծ է. զինուորները, սրիկաները կսկսին տուները մտնել հարիւրաւորներով և այր մարդիկը պահանջել, զինուորներ ծունկ չոքած պատուհաններուն հրացան կը պարպին, իսկ բաշիբոզուկներ գտած այր մարդիկը կոտոր կընեն կանանց, տղայոց աչքի առջև։

Անկարելի է այդ իրողութիւնները գրչի առնել, այնչափ սոսկալի, այնչափ վայրենի են։ Կոտորածը ամբողջ 2 ժամ տևեց քաղաքին մէջ, թէև մինչև երեկոյ, յետ ընկած տեղեր, սպանութիւնները շարունակեցին։

Մեծ ծառայութիւն մատուց „Փրերներու Միաբանութիւնը“, որ իր դպրոցին դռները բացաւ փախստական հայերուն՝ շուրջ 2000 հայ (600 կաթոլիկ և 1400 լուսաւորչական) ապաստան գտան հոն։ Հիւպատոսներու և Ամերիկայի միսիոնարին տան մէջ ալ մի քանի հարիւր հոգի պահպանուեցան։

Երբ ալ փողոցներու մէջ հայ չմնաց, կուսակալը հրաման ըրաւ հայոց կրպակները և տուները թալանելու։

„Հայդե, քուզում, խօջա թալանինա պաշլային“ պոռալով (դէ՛հ, զաւակներս, խոճայի կողոպուտի սկսեցէք, որ ըսել է՝ բան մը մի թողուք, ամենն ալ առէք)։ Մէկ վայրկեանի մէջ հայ վաճառականներու կըրպակներու փականքները կոտրուեցան և եղած ապրանքները թալանեցին. երկաթ դրամարկղներն իսկ կոտրեցին և ստակները առին. կողոպտեցին, թալանեցին, աւրշակեցին միւս կողմէն։

Կոտորածի օրը, որոշեալ ժամուն Թուրք գիւղացիներն ալ զինեալ յարձակուեցան հայ գիւղերու վրայ. Զեֆանոզ, Կոմիլա, Պարիան, Թոց, Աղրիտ, Վերանայ, Կապան, Աղուէոյ և այլն, և այլն շատ մը հայ գիւղեր հրոյ ճարակ տուին, բաւական Թուով հայ գիւղացիներ սպանեցին. կոտոր կոտոր ըրին՝ Կոմիլա գիւղի Մաւեան Տ. Յովհաննէս, Տիվրանոզի Գահիրմանեան Տ. Մաղաքեա և Վերանայի Փափազեան Տ. Մատաթիա ծերունի և ողորմելի քահանաները, քշեցին տարին՝ տաւար, եզ, ոչխար, կով և եղած արմտիքը։

400 հոգի ալ բանտարկուեցան, որոնցմէ կէսը միայն արձակուեցան, իսկ միւսները դեռ կը մնան։

Ո՜վ հայ եղբայրներ,

Օտարէն չենք յուսար գթութի՛ւն, ձմեռը շուտով վրայ կը հասնի, կառավարութեան ճիրանէն ազատողներն ալ բանտերու մէջ և անօթութենէ պիտի ջարդուին։

Թուրքը կը կոտորէ, եւրոպացին կը ծաղրէ, յոյնը կանարգէ զմեզ։

Չունինք կեանքի ապահովութիւն, չունինք տէր տիրական, տուն չունինք, անկողին չունինք, հաց չունինք,

Օգնեցէ՛ք մեզ.

Հարուստ, աղքատ, ծեր, տղայ, քաղաքացի և գիւղացի, տուներու անկիւնները իրար պլլած՝ գթութի՛ւն, օգնութի՛ւն կը խնդրենք։

Ամիս մը այսպէս՝ մենք կորած ենք,

Օգնութի՛ւն, օգնութի՛ւն։

II

ԱԿԱՆԱՏՆՍԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

—

Կսկծեցուցիչ, ահագնապէս խուժդուժ գործերու ականատես՝ չեմ ուզեր անտարբերի մը յանցապարտ լռութիւնը վրաս առնել, այլ գիտցածս հաւատարմաբար կուգամ պատմելու քաղաքակիրթ Եւրոպայի մամուլին մէջ, սփոփանք մը փնտռելով հարիւրաւոր մարդկային անմեղ արարածներու գերեզմանական բողոքը գէթ հրապարակելուն մէջ, քանի որ անզօր ականատես մը եղայ անոնց չարաչար մահուան։

Սեպտեմբեր 26-ի (Հ. տ.) առտուն էր Ռուսական Շոգենաւային Առևտրական Ընկերութեան „Ազով“ շոգենաւը ժամը 11-ին Տրապիզոն հասած էր և ես ալ ցամաք ելած էի։

Ցանկարծ ժամը 10-ին քաղաքի հրապարակին վրան լսուեցան ռէվոլվէրի պայթիւններ և շատ չանցած ըսկսաւ սոսկալի աղմուկ մը, վայնասուն մը և մոլեգին աղաղակներ. „զարկէ՛ք գեաւուրները“։ Խառնիճաղանճ բազմութիւն մը՝ բաղկացած թուրք նաւավարներէ, բեռնակիրներէ, մնավաճառներէ, զինուած հէնրի Մարթինի հրացաններով, ռէվոլվէրներով, եաթաղաններով և դանակներով, կը խռնուէր հրապարակը, կը խուժէր փողոցները, կը յարձակուէր հայոց խանութներուն վրայ, անխնայ կը զարնէր դէմն ելած հայը և աւարի կուտար ու կը կողոպտէր անոնց խանութները։

Դիակները շուտով սկսան դիզնալ փողոցներուն մէջ։ Սոսկալի էր և հալածանքը փախչողներուն ետևէն. կարծես, վայրի գազաններու որս մըն էր, որ տեղի կունենար. յարձակողը թուրքն էր ամէն հասակի, զոհը հայն էր՝ այր, կին, տղայ, ծեր ու մանուկ անխտիր։

Աւելի քան 500 հոգիէ բաղկացած այդ բարբարոսներու խումբը և ոչ մէկ արգելքի հանդիպելով ոստիկանութեան և զինուորներու կողմէն՝ ահ ու սարսափ սկսաւ սփռել բովանդակ քաղաքին մէջ։

Դրիչս անզօր է, գէթ մերձաւոր գաղափար մը տալու այն եղերերգական (tragique) արհաւիրքի մասին, որ պատեց քաղաքը, իր ամէն մասերուն մէջ, քաղաք մը, որ այնքան ժոտիկ էր քաղաքակիրթ Եւրոպայի կեդրոնին։ Հրապարակն այն արիւնահեղ տեսարաններէն մէկը կը ներկայացնէր, որոնք կը յարուցանեն մարդու երևակայութեան առջև Ռոմանի կամ Բարթոլիմեան ջարդերուն յիշատակները, վաղուց անհետացած Լեռայի մէջ։

Ո՜հ, սոսկալի, անհունապէս սոսկալի էր լսել մահուան երկիւղէն սարսափած կիներու, աղջիկներու, տղոց աղէկտուր ճիչն ու աղաղակը, որոնք իզուր օգնութիւն կը հայցէին այդ մարդակերպ գազաններէն։

Հրացանի հարուածներու պայթիւնը, արձակուած քարերու շաչիւնը, կոտրտած ու ջարդած դռներու ճռընչիւնը, փլցուցած սուներու և վաճառանոցներու դղրդիւնը, մոլութեան հասած թուրք խուժանին աղաղակը, անկերպարան դիակներու կոյտերը, երկու սեռի և ամէն հասակի հայերուն, որ արեան լճերու մէջ կը լողային—մարդկային չարչարանքներու համայնապատկեր մը կը պարզէին։

Նահանգապետը, Գատրի բէյ, դուրս հանեց ոստիկաններ և զօրք (թուով հազիւ 200 ամբողջ Տրապիզոնի և իր բերդին համար) և թերևս հրամայեց իսկ անոնց հայերը պաշտպանել, սակայն ուրիշ բան մը տեղի ունեցաւ։ Զինուորները՝ իրենք ալ թուրք, վարակուելով այդ բիւրաւոր խուժանի գիշախնձ խանդավառութենէն, իրենք ալ սկսան զարնել ու աւարի տալ հայերը։

Ես ալ չկրցայ մնալ քաղաքի մէջ և շոգենաւ նստեցի ինքզինքս։

Բարեկամս, պ. Վ. Դ. Աբրաշկևիչ, որ Ռուսական Շոգ. և Առևտրական Ընկերութեան Տրապիզոնի գործակալի փոխանորդն է, կը պատմէ՝ թէ ինչպէս իրենց պաշտօնատեղիէն հանդիսատես ելած են այդ արիւնոտ տեսարաններուն։ „Ճիշտ է, կը գրէր, կոտորածն սկսելէն 20 վայրկեան չանցած հրապարակին վրայ երևցան մէկ մէկ „զապթիէ“, բայց և ոչ մէկ զինեալ թուրք ձերբակալեցին, ոչ մէկ կերպով արգելք ըլլալ փորձեցին կոտորածի շարունակելուն։ Միայն ժամը 11-ին երևցան 12 զինուոր սպայի մը առաջնորդութեամբ և իսկոյն տեղաւորուեցան հրապարակին այլ և այլ կողմերը, հրացաններն պատրաստ. բայց ասոնք ալ ոչ ոք ձերբակալեցին, և, ընդհակառակը, կարելի էր կասկածել՝ թէ ադոնք ալ մասնակից էին այդ կոտորածին“։

Տեսնողներ կը պատմեն թէ շատ անգամ՝ անզէն թուրքեր մատնանիշ կընէին զինուորներուն փախչող հայ մը, և ահա զինուորը նշանակ կառնէր և կը տապալէր խեղճ փախստականը։ Ես ինքս կրցայ այդ հաստատել, որովհետև „Ազով“ ցամաքին մօտ խարսխած ըլլալով, շոգենաւի կամրջակէն շատ դիւրութեամբ կրցանք դիտել մեր դիտակներով փողոցներու մէջ անցած-դարձածը, շնորհիւ քաղաքին զառիվեր դիրքին, որով բոլոր փողոցները կը մերկանային մեր աչքին առջև, բացի հրապարակէն, որ մասամբ միայն կը մնար մեր տեսողու-

թեան շրջանակին մէջ։

Երբ շոգենաւ հասայ, պատմեցին ինձ՝ թէ 11 հայ թուրքերու եաթաղաններէն ապաստան մը գտնելու յուսով նետուած էին նաւակներու մէջ և հալածական՝ դիմեր էին ամենէն մօտ եղող շոգենաւը՝ Աւստրիական Լլոյտի „Վէնիւս"-ը. բայց շոգենաւէն իսկոյն վեր առած են սանդուխքը և ռէվոլվէրի հարուածներով հեռու վանած են խեղճ փախստականները, որոնք և փութացեր էին ապա ռուսական դրօշակի ներքև ապաստան որոնելու։ Մեր շոգենաւին հասած չհասած, հոն աշխատող թուրք գործաւորները՝ իրենց գլուխ ունենալով ընկերութեան ծառայութեան մէջ գտնուող նաւուղիղ (լօցման) Իսմայիլը, կը յարձակին այդ խեղճերուն վրայ, նոյն իսկ ռուսական դրօշին ներքև խողխողելու և ծովը թափելու անոնք։ Բայց վրայ կը հասնի Նաւապետի օգնականներէն պ. Ա. Ի. Կոնստանտինով, կը կորզէ Իսմայիլի ձեռքէն անոր դաշոյնը, և նաւաստիներու օգնութեամբ կը զսպէ այդ սրիկաները և ներս կառնի ապաստան փնտռող հայերը. շատը ծանրապէս վիրաւորուած գնդակներով և եաթաղաններով, որոնց հարկ եղած բժշկական օգնութիւնը կուտայ փութով նաւուն բժիշկ պ. Ն. Պասալսկիյ և կը կատարէ նոյն իսկ կարևոր վերահատութիւններ (opération)։

„Ազով" փոստային շոգենաւ ըլլալուն, պէտք է ճամբայ ելլէր Տրապիզոնէն նոյն Սեպտեմբեր 26-ին, բայց ժամը 1-ի մօտերը շոգենաւ եկաւ ռուսաց ընդհանուր հիւպատոսի լիազօրութեամբ պ. Աբրաշկևիչ, և բացատրելով Նաւապետին քրիստոնեաներուն սպառնացող վտանգը, հրամայեց չմեկնել, այլ մնալ պ. հիւպատոսի տրամադրութեան ներքև, պատրաստել բոլոր մակոյկները, ազատելու համար ռուսահպատակները պ. հիւպատոսի կողմէն տրուելիք նշանին վրայ։

Պ. Աբրաշկևիչ կը պատմէր՝ իր հիւպատոսարան երթալու միջոցին, իր անցած փողոցներուն վրայ գտնուած բոլոր հայ խանութները աւարի առնուած և վնասուած էին. տեսած էր հայու եօթը դիակ, ոմանք գնդակներով սպանուած, ոմանք դաշոյններով խողխողուած, ոմանց գլուխը ջախջախուած, ոմանց կոկորդը կտրտած։ Իսկ իր պաշտօնատեղիէն շոգենաւ եկած ատեն փողոցի մէջ համրած էր 44 դիակ և, ինչպէս կը գրէր ինքը, վերադարձին տեսած էր ուրիշ 45 դիակ ալ։ Հրապարակին վրայ գտնուած բոլոր հայ խանութները գտած էր աւերած և փողոցի մէջ թափթփած, ցան ու ցրիւ կը տեսնուէին վաճառականներու տոմարները, թուղթերը և անարժէք նիւթեր։ Հանդիպած էր նաև քանի մը թուրքերու, որոնք կը փութային իրենց տունները այլ և այլ իրեղէններով բեռնաւորուած, հաւանօրէն, ամենքն ալ գողցուած հայ խանութներէն։

Պ. Աբրաշկևիչ կը պատմէր նաև յատկանշական դէպք մը։ Երբ ինքը քանի մը զապթիաներու հետ նաւակ կը նստէր շոգենաւ գալու՝ պ. հիւպատոսին հրամանն յայտնելու համար, զապթիէներէն մէկը մօտաւոր վերնատան մը պատուհանէն նայող հայ մը նշմարելով, իսկոյն հրացանն ուղղած և նշան առած էր զարնելու համար, բայց պ. Աբրաշկևիչ արգելած էր բլթակը քաշելուն, որով հայը ժամանակ ունեցած էր հեռանալու։ Զապթիէներու և ոստիկաններու այդ օրինակ վարմունքէն կարելի էր եզրակացնել, կըսէ, թէ նոյն վարմունքէն կարելի էր եզրակացնել, կըսէ, թէ ամենոյն ալ պատուիրած ըլլալու էր կոտորածին մասնակցել։

Պ. Աբրաշկևիչ իր պաշտօնական յանձնառութիւնները կատարելէն ետք՝ փութացեր էր տուն երթալու իր ընտանիքն ապահովցնելու համար, սակայն իր բացակայութեան միջոցին, բարի դրացի մը, հազարապետ Աֆեթ պէյ իր տունը հրաւիրած էր անոր ընտանիք և պաշտպանած։ Պ. Աբրաշկևիչ իր տան մէջ ապաստանած կը գտնէ բազմաթիւ հայեր, և նոյն Աֆեթ պէյի միջոցաւ անոնցմէ 16 կին և 11 տղայ իրկել կուտայ իրենց տները և 14 այր մարդ բերդի մէջ պատնպարել կը յաջողի։

Հետևեալ օրն իսկ իր տունը պինպաշիի հսկողութեան յանձնելով, իր ընտանիքը կը փոխադրէ պ. հիւպատոսին տունը։

Սեպտ. 26-ի իրիկուան դէմ հրդեհներ սկսան ծագել, 26-էն 27-ի գիշերը քաղաքին շրջակայքը կը թաղուէր բոցերուն մէջ. ամբողջ գիշեր երկինքը արիւնոտ լուսաւորութիւն մը կը պատէր։

Սեպտ. 27-ին ժամը 5-ին հիւպատոսը պատշաճ դատեց՝ թի իր ընտանիքը և թէ իրեն ապաստանող հայերը, թիւով 100, փոխադրել տալ շոգենաւ։ Այդ դժբախտները մեծ մարդավարութեամբ ընդունեց նաւապետ Բերբերովիչ և հայրական խնամքով հոգաց անոնց բոլոր պէտքերը։ Ապաստանողներէն էր և Ռ. Շ. և Ա. Ընկեր. գործաը, Սերաֆիմով, որ կը հաւաստէր՝ թէ պաշտօնական տեղեկութիւններու համաձայն 1000-ի կը հասնէր սպանուածներու թիւը։ Շրջակայքերէն լուր չկար, թէև կըսէին, թէ երեք հայաբնակ գիւղեր՝ Զեֆանոս, Պայրամ, Թոչի հիմնայատակ ըլլած և կրակի տուած են։ Ադով բացատրեցաւ մեր 26-ի իրիկուան տեսած երկնքի կարմրութիւնը և հեռաւոր բոցերը։

Քաղաքի միւս մասերուն մէջ անցած-դարձածի մասին մանրամասն տեղեկութիւն չունինք. դիտակներով հետևեցանք այդ մարտազոհին, տեսանք կնոջ մը սպան-

ւելը ծովափին մօտ, երբ նաւակներու մէջ օգնութիւն գտնել կը յուսար, նշմարեցինք դիակներու կոյտեր, որոնք երեք օր մնացին փողոցներուն մէջ։ Դիտեցինք թուրքերու խմբակներ, որոնք ծովափը պտտելով՝ կանգ կառնէին տեղ տեղ և կսկսէին քարկոծել ծովուն դուրս նետած դիակները. պատմողներ կան՝ թէ քանի մը օր շարունակ թուրք սրիկաներու գլխաւոր զուարճութիւնն է եղած այդ։

Հոկտ. 2-ին եկաւ ռուսական կէս-մարտանաւ „Տէրէց"-ը, որուն ընդառաջ գացինք՝ հիւպատոսին մէկ պաշտօնագիրը տալու հրամանատարին, և ապա հետեւեցանք անոր մինչև քաղաքին առջևը։

Հոկտ. 3-ին ռուսական դրօշին ներքև դուրս հանեցինք մեզ ու ապաստանող հայերը և շոգենաւը ճամբայ ելաւ իր ընդհատած 19-րդ ուղեգիծը կատարելու։

Նոյն օրն էր, որ կոստանդի Աբրաշկևիչէն հետևեալ լրացուցիչ տեղեկութիւնները. „Տրապիզոնի շրջակայքի հայաբնակ գիւղերուն մէջ նոյնպէս սպանուած են հայեր և տները աւարի մատնուած ու կրակի տուած։ Շրջակայքին մէջ սպանուած են մերձաւորապէս 1150 հոգի, բուն Տրապիզոնի մէջ մօտ 1650 հոգի։

„Ծովը շարունակ դուրս կը նետէ հայերու դիակներ, հաւանօրէն նաւակներու մէջ սպանուած։ Քսան ու վեց տարեկան հայու մը վրայ նաւթ լեցուցած և այրած են, ուրիշ մը գլխատած են հրապարակաւ"։

Ես վերջացուցի. չափազանցութիւն չկայ գրածներուս մէջ, ընդհակառակը, շատ բան թերի է. գրի առի, ինչ որ ես տեսայ անձամբ ցամաքին վրայ և շոգենաւէն՝ դիտակովս և ինչ որ Աբրաշկևիչ կրնար տեսնել իր պաշտօնատեղիէն հիւպատոսարան և իր տունը և դէպի ծովափը տանող փողոցներուն վրայ։

Անշուշտ պիտի գտնուին և ուրիշ վկայութիւններ լրացնելու համար Սեպտեմբեր 26-ի թուրք-ժոնդղական բարբարոսութեան այդ զարհուրելի դրամին նկարագրութեան ամբողջը։

Դր. Ն. ՊԱՍԱԼՍԿԻՑ

ՕՐԴՈՒ

ԿՈՏՈՐԱԾԻ ԵՐԿԻՐԸ

—

Թերևս վերջին նամակս ըլլայ ասիկայ։

Պատահած ու իմացած դէպքերէ ետքը, գլուխս շփոթած, սիրտս ցաւած՝ կը ջանամ քանի մը բան գրել։

Եւրոպական հեռագիրները ամբողջ աշխարհի ձայն տուած կը լլան, հարկաւ, Պոլսոյ, Տրապիզոնի մէջ պատահած սոսկալի՛ կոտորածի առթիւ։

Ահաւասիկ անուղղակի կերպով մեր իմացածը Տրապիզոնի մասին.—

Բահրիի սպանելու փորձէն հինգ օր յետոյ, երեքշաբթի, Սեպտեմ. 26-ին, կէս օրւան ժամը 5-ին, հրամանատար փաշայի հրամանաւ, թուրք խուժանը սուրերով ու բիրերով կը յարձակի շուկայի ժողովրդեան վրայ, ու նախապէս որոշուած ցուցակի մը համաձայն, ամբողջ նշանաւոր հայերը սրի անցնելով, կը կողոպտեն խանութներուն մէջ գտնուած ապրանքները ու այդպէս ժամը մինչև երեկոյեան 11-ը շուկան անմեղ դիակներով կը լեցի։ Մինչև երե՛ք օր հայրերու ու եղբայրներու արիւնը կը ներկէ փողոցները ու երբ գետինը սպանուածներով լեցուած էր, կուսակալը հրաման կրնէ ընտանեաց, որ իրենց դիակները գան, վերցնեն ու թաղեն։

Սակայն ցարդ ստոյգ ու մանրամասն տեղեկութիւն չենք առած. յառաջիկայ ռուսական թղթատարով անհամբեր լուրերու կսպասենք։

Կոտորածէն վերջը, ութը օր է, որ ռուսական շոգենաւը Տրապիզոնի մէջ կսպասէ. վաղը պիտի գայ հոս։ Տրապիզոն շատ մը ընտանիքներ նաւահանգիստը սպասող ութը շոգենաւերը գացեր, ապաստաներ են։ Դեռ վերջը չենք գիտեր՝ ի՞նչ եղաւ։

* * *

Թուրք խուժանը հոս ալ, ուրբաթ օր, Սեպտ. 29-ին, կէս օրւան ժամը չորս ու կէսին, զինուած յարձակում մը տուաւ։

Ժողովուրդը բոլորովին շւարած՝ վերջին ճգնաժամին կսպասէ։ Բայց ամբողջ երիտասարդութիւնը զինուած՝ պատրաստ է կուելու։

Երբ տեսանք, որ տաճիկ ամբոխը եկաւ շուկային մէջ լեցուեցաւ, արդէն դիմադրաւելու կազմ ըլլալով, զէնքի գլուխը վազեցինք։ Բայց կառավարութիւնը խոհեմութիւն համարելով, ցրուել տուաւ այդ գազանացած արիւնարբու ամբոխը։ Այսպէսով անցուցինք շաբաթ ու կիւրակի օրերը։

Կիւրակի օրը, թուրք աղաները խորհուրդ կընին, գիշերը յանկարծական յարձակում մը տալով՝ կոտորել բոլոր հայերը ու այդ նպատակաւ գիւղերը լուր կը ղրկեն։ Մէյ մ՚ալ տեսանք, որ 60 հոգի մէկ՝ շուկաները իջնալով տաճիկ աղաներու գրասենեակներու մէջ ցրուեցան, մէկ ուրիշ մաս մը ալ՝ գիշերը

դալով, ընդամենը 600 հոգի զինեալ, առաւօտուն պիտի յարձակէին Հայոց վրայ ու նոր կոտորած մը ալ տեղի պիտի ունենար։ Բայց երևի բնութիւնը գթաց ու չուզեց այդ օր հայերուն ջարդը։ Ցանկարծ սոսկալի որոտումներ ու սևցած երկնքի վրայ երևցած փայլակները մեծ վախ ազդեցին դաւադիր փանատիկոսներուն վրայ այնպէս որ մռնչող որոտումներուն հետ մէկտեղ եկած տեղատարափ անձրևախառն կարկուտէն ետքը, ամբոխին կէսը ահաբեկած կը ցրուի։—Երկուշաբթի օր սրտատրոփ շուկան կիջնենք։ Ու յանկարծ ժամը 7-ին ատենները Թուրք աղաները հրաման կուտան՝ հայերը ջարդելու։

Անմիջապէս 100 հոգի շուկան կուգան, կը մտնեն, իսկ 200 հոգի ալ ժամ մը հեռուն կսպասէր։ Հայ ժողովուրդը լալով ու աղօթելով սկսաւ խանութները գոցել ու տուն փախչել։ Այս յարձակումը առաջինէն զօրաւոր էր։ Այդ բազմութիւնը ուղղակի կառավարութեան դիմեց հրաման առնելու համար։ Ջարդը անխուսափելի պիտի ըլլար, թէ որ այդ պահուն իսկ կառավարութիւնը հեռագիր չստանար՝ թէ ռուսական նաւատորմը Տրապիզոն մտած է։

Կառավարութեան կողմէ այդ մարդիկը թէև ցրեցան, սակայն ադոնցմէ մէկ քանիները շուկան գալով այսօր, կըսեն՝ թէ վաղը ձեզի անպատճառ սրէ պիտի անցընենք։ Շուտով տարածուեցաւ այս լուրը շուկային մէջ։ Մեր մեծ աղաները կառավարութեան դիմեցին՝ վաղուան ապահովութիւն խնդրելու։ Գայմագամը կըսէ՝ թէ գացէք, հանգիստ եղէք, մի վախնաք։

Կարծեմ՝ թէ վաղը ամբողջ շուկան պիտի փակ ըլլայ։ Տեսնենք, վաղը վերջին օրն է մեր նահատակութեան. մենք ալ զոհուի՞նք մեր պանդուխտ եղբայրներուն հետ։ Վաղը ամեն հայ պատրաստ է կուռելու մինչև վերջին շունչ։ Թերևս վերջին նամակս պիտի ըլլայ այս, ու մեծ յուզման մէջ, կշտապիմ այս տողերը ձեզի հասցնելու։ Սակայն դեռ չեմ գիտեր՝ թէ վաղուան գալիք շոգենաւին պիտի կրնա՞մ հասցնել այս նամակս. եթէ ողջ մնամ, անմիջապէս լուրերը ձեզի կը հաղորդեմ։

Ց. Գ. Դեռ չենք գիտեր՝ թէ ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակը։ Երեկ գիշեր Թուրքերը մեծ պատրաստութիւն տեսեր են, ո՛չ թէ քաղաքացիք, այլ գիւղացիք ու մուհաճիր ըսած աւազակաբարոյ ցեղը։ Այսօր վերջին ճգնաժամուն մէջ ենք։ Պիտի կուլինք։

Մա՛հ կամ Ազատութի՛ւն։

ԱԳՀԻՍԱՐԻ

ԿՈՏՈՐԱԾԸ

Պոլսոյ աղետալի կոտորածի ձայնը անարձագանք չըմնաց գաւառներուն մէջ ալ։ Թուրք խուժանը, գրգռուած կառավարութենէն, մայրաքաղաքէն սկսելով, ամեն կողմ, ուր որ կը գտնուի հայ ազգաբնակութիւն, իրենց Պոլսոյ հարազատներուն օրինակէն գրգռուած, միակ գաղափարով մը տոգորուած են հիմակ, այն է՝ յարձակուել հայերի վրայ, սպանել, կոտորել և թալանել անոնց ստացուածքները։ Պոլսոյ և Տրապիզոնի սարսափներէն վերջը, Ագհիսարի ջարդը խեղճ հայերուն կոտորածի վերջին ապացոյցը և փաստը չպիտի ըլլայ ըսածներուս։

Ագհիսար փոքրիկ աւան մը է, Կէյվէհ և Մէքէճէի մէջ տեղ, Անատոլիոյ երկաթուղիի վրայ, Իզմիտի մութեսարիֆութեան ներքև, 70 տուն հայով և 150 տուն Թուրքերով։

Ագհիսար թէև փոքրիկ, բայց շնորհիւ իր կեդրոնական դիրքին, շրջակայ հայ և Թուրք գիւղերու առևտրի կեդրոնն է և հետզհետէ զարգանալուն վրայ։ Հայերը թէև վերջերս հաստատուած էին հոս, այլ շնորհիւ իրենց աշխատասէր ոգիին՝ մեծագոյն դիրքն ունէին առևտուրի մէջ։ Վերջին ժամանակներս միւդիր մը ունէին, վատ և հայատեաց սուլթանի պաշտօնէութեան ատենացած տիպար մը, որ փորձանք մը եղած էր հայոց գլխին։ Հակառակ Նիկոմիդիոյ առաջնորդին քանիցս դիմումներուն, միշտ մնաց հաստատ իր պաշտօնին մէջ։

Սեպտեմբեր 27-ին, չորեքշաբթի, Ագհիսարի պազարի օրն էր. հոս գլխաւոր քաղաքներ և աւաններ յատուկ առևտրի օր ունին պազար ըսուած, ուր շրջակայ մօտ և հեռաւոր գիւղերէ կուգան գնումներ ու ծախումներ ընելու համար. չորեքշաբթի օրն ալ Ագհիսարի օրն է։

Մաս մը հայեր Պոլսոյ սարսափներէն համակուած, էին գացած պազարը. իսկ անոնք, որ անհրաժեշտ պէտք ունէին և տեղացիները մանաւանդ, անհոգ և անգիտակ իրենց վաճառատուներն և կրպակները բացած, իրենց ապրանքները ծախելու կզբաղին։

Եւ ահա, յանկարծ տաճկական ժամը վեց ու կէսին ատենները Թուրք խուժանը կը յարձակի հայերուն վրայ և կսկսին զառնել, սպանել և ապա թալանել։

Չիաւոր և հետևակ ոստիկաններու խումբ մը, որ ներկայ էր, ամենևին չը միջամտեր. միայն անոնց պետը անտարբեր աչքերով պահ մը դիտելէ վերջ այս աղէխարշ տեսարանը, կը մեկնի դէպ ի Կէյվէ, երկուս ու կէս ժամ հեռի, իմաց տալու գայմագամին։

Արիւնարբու Թուրքերն կատղած կը շարունակին իրենց ջարդը՝ սպանելով և սպանուած խեղճ զոհերը, մեռած կամ չմեռած, քաշկրտելով կը տանեն՝ ջրհորները նետել և կամ նոյն իսկ շուկային մէջ թաղել։

Շուկային թալանումը կը լմնայ և կսկսին յարձակել տուներու վրայ. երբ երկու տուն հազիւ կողոպտած էին, կը հասնի գայմագամը, որ կզսպէ ամբոխին կատաղութիւնը։

Գիշերը կը հասնի Իզմիտի մութէսարիֆը զօրքերով, իսկ հետևեալ օր Իզմիտի առաջնորդ սրբազան Ստեփաննոս եպիսկոպոսն։

Անկարելի է զոհերու զաւակներուն, այրիներուն և վիրաւորներուն սրտաճմլիկ տեսարանը պատմել հոս։ Եկեղեցիին մէջ լեցուած իրենց լացով ու կոծով օդը կը լեցնեն։

Նոյն օրն, ինչպէս և յաջորդ օրը դիակները կը հանուին ջրհորներէն, թաղուած տեղերէն և քննութիւն կատարելէն վերջ կը տանեն, կը թաղեն։

Ողջ մնացողներէ շատերը՝ այլևս չուզելով մնալ այդ անիծեալ աւանին մէջ, շրջակայ հայ գիւղերը կը ցրուին *)։

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ

ՐԷՖՕՐՄՆԵՐ

—

Սուլթանի կառավարութիւնը „ռէֆօրմները ընդունել է“։

Բայց ի՞նչ ռէֆօրմներ.—ոչ թէ Մայիսի 11-ինը Սօլիւսբիւրիի յաւելուածով, որով վերջինս պահանջում էր, որ „Վերահսկող մնայուն կոմիտէի“ անդամներից երեքը լինեն եւրոպական պետութիւնների դրոգօմանները, ո՛չ թէ երեք պետութեան ներկայացուցիչների կազմած Մայիսի 11-նը, այլ վերջինս փոփոխութիւնների ենթարկած և այն էլ յօգուտ սուլթանի կառավարութեան և ո՛չ տէրրօրի ենթարկուած ժողովրդի։

Թէև „Նոր-ռէֆօրմները“ իրենց ամբողջութեամբ յայտնի չեն, բայց յայտնի է, որ եւրոպական կօնտրօլ չկայ, որ Սօլիւսբիւրիի յաւելուածը ոչնչացրած է, ոչընչացրած է նոյնպէս այն, որ սուլթանի կառավարութիւնը պարտաւորւում էր յայտնել եւրոպական պետութիւններին կիսապաշտօնապէս այն անձանց անունները, որոնք վալի են նշանակւում, իսկ Շաքիր փաշան ճանաչւում է իբրև ընդհանուր կառավարիչ։

Դիպլօմատիան՝ անկարող լինելով բոլորովին մի կողմ քաշւել և երկու թշնամիներին թողնել մէկ մէկու դիմաց, օգտւեց այդ յուզումների ու երկիւղի ժամանակից և շպրտեց մի այլանդակ բան մարտիրոս հայ ժողովրդի ճակատին, յուսալով, որ այդ այլանդակութիւնն անգամ կարող է բաւարարութիւն տալ երկիւղի մէջ գտնւող ժողովրդին։ Նա հայ ժողովրդի վերաբերմամբ իւր սպառնալիքը կատարեց, որ մի պատրւակ էր՝ դուրս գալու այն դժւարութիւններից, որոնց մէջ էր ընկել։

Դիպլօմատիան իւր այս գործով հաստատում է, չըգիտենք քանի երրորդ անգամ, որ երբէք, ոչ մի ժողովուրդ չպիտի յոյս դնի նրա վրայ, որ դիպլօմատ ասւած էակը անսիրտ, անզգայուն արարած է, որի համար չկայ ոչ մի սուրբ բան, որի համար մարդկային տանջանքները ոչինչ են—նրա համար միայն կայ, ինչ որ էլ ուզում է լինի, պետական շահերը, սրանցից դուրս նա ոչինչ չի ճանաչում։ Նա գործում է, նա պահանջում է դրական ձևով, նա ռմբակոծում է, անթիւ ու անհամար զոհեր է անում, երբ նրա պետական շահերը այդ պահանջում են. բայց քանի չկայ այդ, նա միայն խաղեր է անում խաբելու թէ յուզւած և թէ տանջւող ժողովուրդներին։

Սասունի կոտորածից սկսած Հայկական խնդիրը ունեցաւ մի քանի շրջաններ՝ մի քանի գոյներով և երբէք դիպլօմատիան անկեղծ չէր, ոչ միայն հայ ժողովրդի վերաբերմամբ, այլ և իւրաքանչիւրը աշխատում էր մէկ մէկու խաբել և օգտւել հանգամանքից՝ աւելի ազդեցութիւն ձեռք բերելու Օսմանեան պետութեան մէջ։

Գլխաւոր հակառակորդներն էին Անգլիան և Ռուսիան, իսկ հասարակապետական Ֆրանսիան միայն „ձայն էր պահում“։ Եւ ռէֆօրմների ընդունելը այսքան ձգձգւելու գլխաւոր պատճառը հենց այս „հակառակութիւնն“ էր։ Եւ ո՞վ եղաւ յաղթողը.—սուլթանի կառավարութիւնը՝ ռուս-ֆրանսիական դիպլօմատիայի ուսերին նստած։ Եւ ահա շնորհիւ եւրոպական դիպլօմատիայի, ոճրագործը, դահիճը յաղթութիւններ է տա-

---

*) Մեր ընկերը մեզ ուղարկել է թէ սպանուածների և թէ վիրաւորուածների անուանացուցակը, որը տեղի սղութեան պատճառով անկարող եղանք զետեղել. սպանուածների թիւը 31 է. իսկ վիրաւորուածներինը 33։

նում, նա „անց է կացնում“ „իւր բէֆօրմները“. սա մի փառաւոր ապտակ է ամբողջ քաղաքակրթուած աշխարհին ու գլխաւորապէս Հայկական դատը պաշտպանողներին, իսկ մի ծաղր, մի հեգնութիւն նրան սպառնացողներին։

Տարուց աւելի քաշքշելուց, մեծ մեծ խոստումներից յետոյ, այսօր դարձեալ դահիճը իրենն արաւ. նա հենց սկզբից պնդում էր, որ սկզբունքով ընդունում է բէֆօրմները, բայց ոչ միայն հայերի համար, այլ ամբողջ Օսմանեան պետութեան, որ նա Հայաստան անունով երկիր չի ճանաչում, այլ իր ցանկացած բէֆօրմները կը մտցնի Անատօլիայի մէջ. հենց այդ նպատակով էլ նա նշանակեց Շաքիր փաշային ընդհանուր կառավարիչ, որին պետութիւնները մերժեցին ընդունել, և նա արաւ իր ասածը. դիպլոմատիքական տեսակէտից նա տարաւ ամենափայլուն յաղթութիւն։ Իսկ յեղափոխակա՞ն. տանո՞ւմ է նա մի որ և է յաղթութիւն, ապտակում է նա յեղափոխականներին. ո՛չ։

Դաշնակցութիւնը մերժեց Մայիսի 11-ի բէֆօրմները՝ պնդելով, որ նրանք ոչինչ չեն տալիս, որ իրերի դրութիւնը չեն փոխում, հետևապէս և Դաշնակցութիւնը ոչ միայն զինաթափ չէ լինում, այլ և իւր գործունէութեան, իւր տակտիկայի մէջ ոչ մի փոփոխութիւն չէ մտցնում։ Իսկ այդ անամօթ խաղից յետոյ ի՞նչ է մընում մեզ ասել։—Ոչինչ, միայն կրկնել միշտ՝ յեղափոխութիւնն է միակ միջոցը, որ մեզ կազատի ներկայ սարսափելի դրութիւնից։

Հայ ժողովրդի դրութիւնը աւելի քան թէ կրիտիքական է և ներկայ ծանր րոպէն պահանջում է ամենալուրջ գործունէութեան հետ և ամենաեռանդուն գործունէութիւն. մի րոպէ կանգ առնելը կորուստ է, դա կարող է մահացու լինել, պիտի անընդհատ շարունակել յեղափոխական շարժումները, զինելով ժողովուրդը. „սուլթանական ա՛մենանորագոյն բէֆօրմները“ մի ծաղր, մի սատանայական հեգնութիւն են հազարաւոր զոհերի յիշատակին. արեան միջից պէտք է այդ յետ շպրտել նրանց ճակատին, որոնք առ ոչինչ են համարում հազարաւոր զոհերը, արեան լճակները աւերակ դարձած երկիրը։

Սուլթանի կառավարութիւնը մի ձեռքով կոտորածների հրամաններ է տալիս, միւս ձեռքով „բարենորոգումների իրադէ“ է հրատարակում „Անատօլիայի իւր սիրելի ժողովրդի համար“. պէտք է լաւ հասկանալ այս դրութիւնը, պէտք է ըմբռնել նրա մեքենայութեան ամբողջ ուժը. այս տեղ թագնուած է մի դժոխային մեքենայութիւն, մի մե՛ծ դաւադրութիւն։ Սուլթանի խորամանկ պետական մարդիկը ուզում են խոր քնով քնեցնել, ուզում են հայ ժողովրդի մէջ բաժանումներ առաջ բերել, նրան հեռացնել յեղափոխականներից ու զինաթափ անել, այսինքն միամտացնել, թուլացնել, յուզմունքը ու գրգռումը ոչնչացնել և հետզհետէ, աստիճանաբար, աւելի հմտութեամբ արիւնաքամ անել, լուռ ու մունջ խեղդել, սպանել։ Նա այնտեսակ բարեկորոգումներ է խմբագրել ու անցկացրել, որ իւր զոհը ամբողջութեամբ միշտ մնում է իւր ձեռքում, հետևապէս կարող է իւր դժոխային նպատակին հասնել—ոչնչացնել հայ տարրը Տաճկահայաստանից։

Կրկնում ենք, լաւ պիտի հասկանալ այս դժոխային մեքենայութիւնը և մի րոպէ ներկայ դիրքը չպէտք է փոխել, պիտի շարունակել. աւելի լաւ է կուել և պատուաւոր մահով մեռնել, քան արիւնաքամ լինելով, իբրև ստրուկ ոչնչանալ։

Եւ գաղթականների, պանդուխտների, էմիգրանտների վերադարձը, որ ինչպէս Մայիսի 11-ի, նոյնպէս էլ սուլթանական բէֆօրմների կէտերից է, նոյնպէս մեքենայական դիտումով է մտցրած—թակարդ է լարած, ուստի պէտք է զգոյշ լինել և հայրենիք վերադառնալ ոչ իբրև „խաղաղ շինական“, այլ զէնքը ձեռին...

Ո՛չ, չպէտք է հաւատալ մեր երդուեալ թշնամուն, նա խաբեբայ է. ո՛չ, չպէտք է հաշտուիլ, չպէտք է մի րոպէ դադարել յեղափոխական շարժումներից։

Զէ՞ որ նա միաժամանակ մեզ դասեր է տալիս, էէ՞ որ նա շարունակում է կոտորել. և պէտք է աւելի քան տխմար ու ապուշ լինել հաւատալու նորագոյն վիժմունքին և ձեռնպահ մնալ։ Ամենաաններելի սխալը կը լինի, դա ինքնասպանութիւն կը լինի. ներկայ րոպէն պահանջում է կռիւ և եռանդուն կռիւ. բայց հասկացած, չափած, կշռած կռիւ, ի նկատի ունենալով թշնամու ուժը ու դիրքը։ Ներկայ ճանապարհից չպէտք է շեղուել, նա պիտի շարունակել. խուսափելը մահ է, իսկ կռիւը՝ կեանք. և մենք կեանք ենք փնտրում։

ՇԱՔԻՐ ՓԱՇԱՅԻ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՆԸ

(ՆԱՄԱԿ ԿԱՐԻՆԻՑ)

—

Ներկայումս մենք հանդիսատես ենք բաւական հետաքրքիր ներկայացման մը։ Գլխաւոր դերասանը միշիր Ահմէտ Շաքիր փաշան է, որը բարեկարգէի դերով հոս եկած է։ Դժբախտութիւնը սակայն նրանումն

է, որ միւս գլխաւոր դերասանը՝ հայ ժողովուրդը, որը մինչև այսօր երկար տարիների ընթացքում շատ մեծ ախորժակով կը մասնակցէր այդ տեսակ ներկայացումների և երևակայականը ընդունելով իրականութեան տեղ, շատ լաւ կը կատարէր իր ստանձնած դերը,—այդ ժողովուրդը այս անգամ կատարեալ բացակայ է։

Հաքիր փաշան սկսեց իր դերը, թէև յանպատրաստից, սակայն շատ մեծ շքով, ցանկանալով շլացուցիչ դէկօրացիաներով հլապուրել թէ հանդիսականներուն և թէ իր ապագայ ընկերակիցներուն։ Տրապիզոն հասնելով, նա իզուր թափառեց թէ գլխաւոր և թէ երկրորդական փողոցներով, նստած իր փառաւոր կառքի մէջ, շրջապատուած փայլուն շքախմբով. իզուր արդարութեան պաշտպան, չարերին հալածող, բարիներին հովանաւորող միջնադարեան ասպետի դիմակը դրած՝ նա դէս ու դէն ընկաւ և „գործ“ փնտրեց։ Ոչ մի տեղէն, ոչ մի անձնաւորութենէն և ոչ մի դիմում. . .

Ասպետական քնքոյշ սիրտը կոտրած, մխիթարելով իրեն նրանով, որ Տրապիզոնը դեռ ևս իր բուն գործունէութեան ասպարէզը չէ, Հաքիր փաշան իր քայլերը ուղղեց դէպի Կարին, բայց այս անգամ աւելի մեծ շքով, թնդանօթներով, բազմաթիւ զօրքով, երաժշտական խմբերով և այլ շլացուցիչ պատրաստութիւններով, վերագրելով , երևի, իր Տրապիզոնի անաջողութիւնը արտաքին փայլի նւազութեան։ Սակայն դիմաւորող բազմաթիւ (5000) տաճիկ ամբոխի, յոյն հասարակութեան ու մի քանի օտարների մէջ և ոչ մի հայ... չնայելով, որ կառավարութեան կողմից դիմումներ էին եղած թէ ուղղակի և թէ անուղղակի կերպով առաջնորդին, հարուստներուն և մինչև իսկ Սանասարեան վարժարանի տեսչութեան։ Կարծես, այդ օրը Կարնոյ հասարակութիւնը մոռցած էր իրեն յատուկ սարսափելի հետաքրքրութիւնը ամեն մի նորեկի վերաբերմամբ։ Իւրաքանչիւր հայ գլուխը կախած, իր գործին էր, իսկ դարբիններին Հաքիրի գալուստը այնպիսի ոյժ, աշխոյժ ու կենդանութիւն էր պատճառած, որ Հաքիրի մօտեցած ատեն մուրճերի ձայնը ամբողջ փողոցը կը դղրդեցնէր։ Միւս կողմէն պէտք էր տեսնել, թէ ինչպէս Միւշիր Հաքիրը ամենախոնարհ բարևներ կուղղէր իրենց խանութների առաջը կայնած հայ խանութպաններուն։

Հաքիրը մնաւ Կարին և սպասեց... մինչև այսօր էլ կսպասէ և դեռ երկար պիտի սպասէ, որ կարնեցիք „դիմեն“ իրեն՝ իրենց վիճակը բարեկարգելու։ Ոչ մի դիմում չէ եղած մինչև այժմ, ոչ մի հայ դեռ չէ գանգատած իր դառը վիճակի վրայ, չնայելով, որ ինքն արդէն կոչ է ըրել ամենուրեք և պատրաստականութիւն յայտնել արդարութիւնը պաշտպանելու։

Հաքիրի այրած սիրտը սփոփեց միայն վաճառական մը, որը խօլերայի ժամանակ դեղեր էր հայթայթած Մը-շոյ կառավարութեան և ստակը դեռ չէր ստացած։ Նրա դիմումով Հաքիրը իսկոյն հեռագրեց, որ անմիջապէս վճարուի վաճառականի պարտքը։

Անգործ մնացած Հաքիրը, տեսնելով, որ բնաւ յաջողութիւն չունեցաւ իւր ասպետական դերի մէջ, դէն ձգեց իր վրայ առած պարզութեան, ուղղամտութեան դիմակը և հագաւ նորէն արևելեան խորամանկ դիպլօմատի քրքրած հագուստը։ Յոյս դնելով հայերու սնափառութեան ու շահասիրութեան վրայ, նա սկսեց հրաւիրել դրանց մեծ մեծ ռոճիկներով այլ և այլ պաշտօններ ստանձնելու։ Աղէսի խելքն այս անգամ ալ չօգնեց. ոչ մի հայ չհրապուրուեց այդ փառաւոր պաշտօններով և եթէ կային անհատներ, որոնք ի բոլոր սրտէ կը լիզէին Հաքիրի ոտքերը առաջարկած պաշտօններու համար, ասոնք ալ աչքի առաջ ունէին յեղափոխականի սարսափեցուցիչ պատկերը։ Հաքիրը կը զայրանայ, կը կատաղի, կը փրփրայ, բայց ի՞նչ օգուտ։ Այդ դեռ ոչինչ։ Հաքիրի կատաղութեան չափ ու սահման չկար, երբ տեսաւ իւր քայլի ներգործութիւնը. արդէն պաշտօն ունեցողները սկսան հրաժարական տալ, Բալարեան Կարապետի նման։

Այսպէս, ուրեմն, այս անգամ Տրապիզոնի և Կարնոյ հայ ժողովուրդը այնքան յիմար գտնուեցաւ, որ հրաժարուեց սուլթանի հրամանով եկած „բարեկարգիչ“ Հաքիրի առաջարկած բոլոր բարիքներից, ոչ մի դիմում չըրաւ անոր, ոչ մի նշանակութիւն չտուեց, մինչև իսկ հակառակ ցոյցեր ըրաւ անոր դէմ, այն Հաքիրի դէմ, որը անչափ կը սիրէ հայերը, որը լաւ լաւ պաշտօններ կառաջարկէ անոնց և իւր բոլոր ծառաները հայերէն կը ընտրէ։ Ապերախտ ժողովուրդ, ամենայն իրաւամբ կըրնայ կոչել Հաքիրը, ձեռները լուալ, հեռանալ և յանձնել նրան . . . քրդերի ու սովալուկ պաշտօնեաներու „դատաստանին“։

Հաքիրը շուտով կը մեկնի գաւառները։ Յոյս ունինք, որ գաւառացի հայ ժողովուրդն ևս հետևի Կարնոյ և Տրապիզոնի օրինակին։ Այդ նպատակաւ արդէն Դաշնակցութեան Կարնոյ Կեդրոնական Կոմիտէն ազդարարութիւններ է ցրել գաւառները, որոնցով կը հրաւիրէ հայ ժողովրդեան՝ ոչ մի դիմում չընել Հաքիրին և չհամարձակի ընդունել անոր որ և է առաջարկութիւնները։

ՆԱՄԱԿՆԵՐ ՎԱՆԻՑ

I

Տաճկահայաստանը ընդհանուր տագնապի մէջ է... Ամփոփենք աչքերնուս առջև հարստահարութեանց նկարագիրը՝ և կը տեսնենք ամեն տեղ թշուառութիւնը իւր ծայրայեղութեան հասած։ Սուլթանի կառավարութեան գործ դրած սոսկալի միջոցները՝ հայ ժողովուրդը իսպառ բնաջինջ պիտի անեն կարճ ժամանակէն։ Տնտեսական տագնապը անաստիճան ծանրացած է խեղճ ժողովրդի վրայ, որ այլ ևս սկսած է ահագին թւով զոհեր տանել։ Ի՞նչ անէ նա, երբ ամիսներով ցորենի երես չի կրնար տեսնել. նա կը դիմանայ, որչափ շունչ կայ իր մէջը. ցորենի, տարեկանի, գարիի, կորեկի տեղ գոհ կը լինի կորնկանի (խոտի մէկ տեսակ) հացով, ու երբ այդ ալ չի գտներ՝ անօթի կը մնայ և վերջա-

պէս զրկուած իր տաւար ոչխարէն, իր ամեն գոյքերէն՝ կընտրէ իրեն համար կորուստի միջոցներէն մէկը,— կամ հաւատափոխ կը դառնայ, կամ տունով տեղը կը բռնէ գաղթականութեան անդարձ ճանապարհը։

Անխիղճ սուլթանի կառավարութիւն կը ձգտի դրամի նմոյշ չթողնել ժողովրդի մէջը։ Այն տեղերը, ուր տուրքերը գանձուած են՝ սկսած է հաւաքել եկող տարիներուն ալ։ Այս բանը կատարուած է Վասպուրականի հարաւակողմի գաւառները։ Այդ լեռնային երկիրը, որ չի կրնար իրեն բաւականաչափ հաց արտադրել՝ ժողովուրդ կը պարտաւորի գնել ամեն տարի, բայց այս սոսկալի հարստահարութեանց վերջին մնացորդը ի՞նչ միջոցի դիմէ, ինչո՞վ ճարէ հացը։

Նա իր յոյսը դրած իր փրկութեան վրայ՝ կը տանի ամեն տառապանք։ Նորա համար այլևս նշանակութիւն չունեն սուլթանի կամ ուրիշներու ողորմութիւնները։ Նա ալ չի խնդրիր ու չի մուրար, ինչպէս արած է մինչև հիմա, այլ իբրև մարդ կը պահանջէ իւր իրաւունքը և պատրաստ է արիւնը թափել անոր համար։ Ժողովուրդը պատրաստուած է այլ ևս. ձեռք տանք, ուրեմն, չխնայենք մեր օգնութիւնը և փութացնենք նորա փրկութեան ժամը։

Բայց ահա բարենորոգումն սկսած է. հարստահարութիւններ կրկնապատկուած են, օր չանցներ, որ չլսուին կողոպուտի, թալանի, մարդասպանութեան, առևանգութեան, անխիղճ հարկահանութեան աղիողորմ մրմունջներ։

II

Քայլ մը յեղափոխութեան մէջ։

Հայ ժողովրդի ներկայ տագնապալի վիճակին մէջ կը գտնուին տակաւին գլուխներ, որոնք կը ձգտին իրենց յիմար համոզումները տարածել ժողովրդի մէջը։

Ժողովուրդը արդէն կորուստի մատնուած, թէ ի՞նչ կը քաշէ խայտառակ սուլթանի կառավարութեան ձեռք, այդ կը տեսնենք ամեն օր ափ-աշկարա, սակայն մեր անամօթ տզրուկները կը յանդգնին խոհեմութիւն քարոզել, ժողովուրդը զգուշացնել՝ որ սիրով տանեն ամեն տառապանք, բանտերու մէջ մաշուին, իրենց ամեն ինչքերէն զրկուին ու մերկ ու անօթի դռնէ դուռ մուրան... և այդ բոլորը տանեն սիրով և համբերութեամբ։

Ո՞վ տեսած է պահպանողական-յեղափոխականներ, մենք այդ էլ ունինք։ Գոնէ այդ սուրբ անունը թող իրենց վրայ չառնին և արատ չդառնան յեղափոխական սուրբ գործին։ Իսկապէս ցաւ է տեսնել ժողովրդի մէկ մասի, թէև աննշան, այդ վիճակին ենթարկուած լինելը, որուն պարտական են քանի մը անխիղճ, հացկատակ իբր ղեկավար-առաջնորդողներ...

Խեղճ ռամիկը, որ դարերով զզուած է իրեն տանջող քիւրդէն ու թուրքէն՝ երբ առաջին անգամ կը լսէ „հաւասարութիւն, համայնականութիւն“ սուրբ բառերը, կը խրտչի ու այդ բանը կը դառնայ պահպանողականներու համար մեծ զէնք մը։—„Ի՞նչպէս հաւասար իրաւունք տալ ասորիին, եզիդիին, քիւրդին և այլն. կամ ինչո՞ւ աշխատել յեղափոխութեան գաղափարը տարածել այդ ստրուկ ցեղերու մէջ ալ, որ մեզ հետ հաւասար իրաւունք ունենան“։ Այսպէս կը քարոզեն այդ խաւարի առաքեալները, որ, կարծես, միակ ձգտումն ունին նոր նոր բռնապետներ դառնալու, խեղճ ժողովրդի գլխին՝ ապագայի մէջը։

Բայց, ի հարկէ, չեն կարող միշտ գոյութիւն ունենալ այդ պորտաբոյծները։ Սուրբ գաղափարները միշտ յաղթանակած են և կը յաղթանակեն։ Որչափ հնարաւորութիւն կար՝ իրենց լուտանքները թափեցին միամիտ ժողովրդի գլխին, ու հիմա սկսած են տկարանալ։ Իգական սեռի և գիւղական ժողովրդի դէմ հայհոյեցին ամեն արգելքներ, հալածանքները զուր անցան և վերջապէս յաջողեցան իրենց տեղը ունենալ յեղափոխութեան մէջ և ճանչցուիլ, իբրև յեղափոխական մարմին, պաշտպանելով իրենց իրաւունքը հաւասարապէս։ Այսպէս պիտի յաղթանակէ ամեն վսեմ գաղափար. թող հակառակին, որչափ և կուզեն այդ խոշոր ճուկները։

Սուլթանի կառավարութեան դարաւոր աղդեցութեան տակ՝ հայ ժողովրդի այդ մէկ մասը, կարծես, վարակուած լինի տիրող խայտառակ բարքերէն, որին մեծապէս կը նպաստեն կարգ մը իբր ղեկավարող մարմիններ, որ երբեմն բոլոր եռանդով կաջակցէին ժողովրդական սուրբ գործին, իսկ այժմ կաշխատեն մեռցնել նոյն սուրբ գործը. այդ է իսկական ցաւը։

Բարոյապէս ալ մեռած, ստրուկ դարձած է մեր երկրի ժողովուրդը։ Մեզ հարկաւոր է ընդհանուր յեղաշրջում։ Ա՜հ, երբ պիտի հասնինք այդ օրին, ե՞րբ պիտի տեսնենք վերցուած մէջտեղէն սուլթանական անարդ բռնապետութիւնը և նորա տեղը բարձրացած ժողովրդական-Ռամկավարական ազատ Վարչութիւնը։ Մենք ունինք ապագայի համար այդ չափ հաւատք։

ՆԱՄԱԿ ԿԵՍԱՐԻԱՅԻՑ

Այս կողմերը հարկահաւաքութիւնը այն աստիճան խիստ է, որ մէկ երկու տարուան հարկը մի անգամէն կը պահանջեն և ամենայն խստութեամբ մինչև յետին կը պահանջեն և ամենայն խստութեամբ մինչև յետին պիտոյքը ծախելով, պարտականները յետին չքաւորութեան մատնելով, կը գանձեն։ Առևտուրը դադարած է, շահ չկայ. Կեսարիոյ շուկաները միլթէվէլիներով և ոստիկան զենուորներով լեցուն են, հարկը վճարողը վճարեց, չը վճարողը անարգանք, ծեծ և լլկանքէ յետոյ կը բանտարկի. ահա այս կերպով հարիւրաւոր մարդիկ շարունակաբար կը բանտարկին ու կելլան։

Թալասի մէջ աւելի ծանր կերպով կը տիրէ հարկահանութիւնը. հարկը չուղղին տունը կը պարպեն. ոստիկանք և միլեթիկի ձեռքը ծախել կուտան ամեն տեսակ կահ կարասիք, ուտելիք և այլն։ Պարտականին հաշիւը գոցելէ յետոյ՝ մնացորդը քսակին կը դնեն,

ինչ որ միշտ պատիւ կը բերէ սուլթանի կառավարութեան։ Բոլոր երկրի մէջ հիմա էքաւորութիւն, անդորձութիւն կը տիրէ։ Ամբողջ սնանկութիւնը խեղճ ժողովուրդը պաշարած է ալ, բան մը չունին տալիք և ծախելիք։ Ցաւալի է տեսնել շատ մը ընտանեաց սըրտաճմլիկ տեսարանը, որոնք թաշկինակ ի ձեռին կուլան. ծախուող կահ կարասիաց գլուխը պաշտպան չունին՝ չի կայ քովերնին ոչ էրիկ, ոչ զաւակ, որոնք վտարանդի են արդէն։ Աւելի ցաւալին այն է, որ ոստիկանապետ պէյը, ոստիկան զինուորները և միւթիվէլիները քանի մը հայ վաճառականներու հետ նախ կուգան հայու դուռը՝ կառաջարկեն տալ երկու տարեան տուրքը. եթէ ստակ չի կայ կամ վաղը ըսելու ըլլայ, ոստիկանապետ պէյը անմիջապէս կը հրամայէ, որ տունը կողպտեն և ոստիկանները՝ հաւատք, կրօնք հայհոյելով, կը մտնեն տունէն ներս. ալ հոս երևակայեցէք՝ բըռնաբարումը, հարստահարութիւնը, թալանումը, կողոպտումը, ընտանեաց մէջ լաց ու կոծն և իրարանցումը, որ աննկարագրելի է։ Ահա տուրքի պատճառաւ այս տեսակ վայրենութիւններ կըլլան շնորհիւ „վեհափառ սուլթանին“։

Կեսարիոյ հիմիկուան կառավարիչը, նոր եկած ժամանակ, Թալասի հայոց երևելիներէն մէկուն կողմանէ հրաւիրուեցաւ։ Կառավարիչը 15 ձիաւորով եկաւ, իջաւ մարդուն տունը, ուր կը պատուին կառավարչին, գառնուկներ մորթուեցան և ուրիշ պատրաստութիւններ տեսնուեցան։ Քաղաքակիրթ կառավարիչն կէս օրն անցած պահուն, առանց պատրաստեալ ընթրիքը պատուելու, մեկնել կուզէ և կելլէ ու տանտիրոջ թախանձանաց դէմ՝ „ինձի համար պատրաստուած գառնուկը զբրկեցէք ետևնուս. ես իմ տունս կուտեմ, ձեր և ոչ մէկուն ներկայութիւնը պէտք է“, կոշտ պատասխանը տալ չամչնար և գառնուկը հետը առնելով, կը մեկնի Կեսարիա, որ Թալասէն մէկ ժամ է։

Ասկից վեց ամիս առաջ, մի քանի հայ մեռուցած են Կեսարիայից մէկ ու կէս ժամ հեռաւորութեամբ տեղեր, որոնց անունն իսկ էյիշեցաւ. այս մասին բողքներ եղան կառավարչին, բայց իզո՞ւր. բողքներիս՝ ցկորսուցէ՛ք, շուներ, մի՞թէ ըրածնիդ չը բաւեց“ պատասխանէ զատ ուրիշ արձագանք չունեցանք։

Ամիս ու կէս առաջ Իւզուլ-պէկ օղլու աղա Կարապետ անուն վասակի մատնութեամբ, Թալասէն Կեսարիա տարին Գալֆայեան Մատթէոս անուն երեսուն երկու տարեկան հայ մը, իբրև թէ քաղաքական խնդիրներու վերաբերեալ խօսք մը խօսած ըլլալու անքաւելի յանցանքը կը բանտարկի։ Խեղճ երիտասարդին երկրորդ անգամն է այս ձերբակալութիւնը, որ այժմ կը հեծէ մութ ու խոնաւ բանտի մէջ, որ և է յանցանք չունենալով։

Հինգ օր առաջ կեսարացի հաճի Տիգրան և Միհրան հաճի Իւսուֆեաններն ու հաճի Յակոբ Ագդաղ-Մատէնի կողմերը կերթան՝ բուրթ առնելու համար։ Ճամբուն դէմերնին եկան կառավարութեան կողմէ կարգուած չէրքէզի հագուստով տասներկու ձիաւոր և իրենց մարթիները դարձնելով, կը հրամայեն՝ „անհաւատնե՛ր, անձնատուր եղէք“. Նոքա կը դիմադրեն մինչև վերջին շունչ, բայց ի զուր, կապարի հարուածներ ընդհատելով դիմադրութիւնը՝ երեքն ալ գետինը կը գլորին, որոնցմէ հաճի Յակոբը և Տիգրանը կը մեռնին, Միհրանը յուսահատ վիրաւոր վիճակի մէջ, Մատէն կը տարուի։ Կառավարութեան պաշտօնեայ աւազակները վաճառականներուն ունեցածը կողոպտելով, կանցնին կերթան։ Հիմայ ո՛չ հարցնող, ո՛չ փնտրող կայ, վասն զի կառավարութիւնը այս տեսակ բողոքներ իրրև զբպարտութիւն՝ բողոքողներուն անմիջապէս կը բանտարկի։ „Վեհափառ սուլթանի“ շնորհիւ տիրող „արդարասիրութեան“ էքնաղ տիպարներն են ասոնք։

Թալասի և երկու ժամ հեռաւորութիւն ունեցող ս. Կարապետի վանքին միջև երկու երիտասարդ հայ մեռուցին, որոնց ով ըլլալնին լաւ չէրցանք հասկնալ, միայն կըսուի՝ թէ երեք ժամուան մօտակայ գիւղացիներ են։ Հիմայ ընդհանուր վախ և նարսափ կը տիրէ թէ՛ Կեսարիայ և թէ շրջակաները. որ և է վաճառական չի կրնար դուրս ելլալ։ Քաղքի մէջ ալ թուրք տարրը կատղած է հայու դէմ, կառավարութիւնը յորդորելով՝ կը դրդէ ռամիկ թուրք ժողովուրդը և կըսուի՝ թէ գաղտնապէս փամփուշտներ կը տուին։ Ամեն վայրկեան տաճիկների յանկարծակի յարձակման վախը կը տիրէ։ Ժողովուրդը ահ ու դողի մէջ է։

Կեսարիոյ վիճակին առաջնորդ Տրդատ վարդապետ Պալեան իւր փառամոլութեամբ, հպարտութենէ և մատնութենէ ետ չի կենար. կասկած կամ տարակոյս ունեցածը անմիջապէս կը մատնէ և անցեալ տարի Նորդատ ցուցուցած քաջագործութեանց յաւելուածները կը տեղէ։

Կեսարիա, մէկ խօքով, այժմ հարստահարութեան, զրկանաց, մատնութեանց, բանտարկութեանց, մարդասպանութեանց ասպարէզ մը է։ Այս է մեր երկրի անդորրական վիճակը՝ շնորհիւ բռնակալ սուլթանականութեան։

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱԽԼԱԹ (ԽԼԱԹ) ԳԱՒԱՌԻ

—

Ախլաթ Բիթլիսի գաւառ է՝ բաղկացած 30 գիւղերից, որոնց մի մասում ապրում են հայեր, միւսում քրդեր, մընացեալները քրդախառն են։ Ամենափոքր գիւղն ունի 20, իսկ ամենամեծը 200 տուն բնակիչ։ Գաւառիս մէջն է „Նազուկ“ կոչուած լճակը, իսկ գաւառիս կից՝ Վանայ (Բղնունեայ) լիճը. այդ երկու լճերից ստացւում են անագին քանակութեամբ մեծ ու փոքր պատուական ձկներ, որ կաղալով են տրւում բացառապէս մուսուլմաններին եւ ոչ երբէք քրիստոնեայի, մանաւանդ հային, ուստի մենաւաճառները ծախում են այդ ձկները հայերին թանգ գներով։ Գաւառիս ծովեղերեայ գիւղերը լաւ այգիներ եւ պարտէզներ կրնան արտադրել, բայց ցաւալի է ասել, որ ժողովուրդը՝ ծանր տուրքերի, թալանիչ քիւրդերի եւ հարստահարող զօրքերի

ճնշումներից ազատելու համար, ստիպված է թողնել իւր այգիները, պարտէզները եւ պանդխտութեան ցաւը ձեւացիները, գաղթել Պոլիս, Եգիպտոս, Ռուսաստան եւ նոյն իսկ Ամերիկա, ամայի դարձնելով իր հայրենիքը... Թէ ո՞վ եւ ինչ է քիւրդը հայերիս համար մեր գաւառում, թերեւս մի փոքրիկ գաղափար տայ քիւրդ Ճանկոյի ընտանիքի հետեւեալ պատմութիւնը։

Ճանկո մի նմանեայի քիւրդ էր, որ կը բնակէր Բիթլիսէն մի օրեայ ճանապարհ հեռու գիւղ մը։ Ճանկո՝ լինելով աղքատ, իր ընտանիքով եկաւ Կիւզալտիրէ եւ սկսեց հայոց արտերու մէջ մշակութիւն ընել, ծխատոտ, ճմերուկ, կաղամբ եւ այլ բանջարեղէն բուսցնել եւ անոնցմով պահել իր գերդաստանը, մինչեւ որ Ճանկոյի որդի Աւդալ մեծցաւ։ Աւդալ՝ լաւ ծանօթ լինելով հայոց գիւղերու վիճակին եւ մարդկանց բնաւորութեան, սկսեց զբաղուել գողութիւններով, սպանելով Թուխ գիւղի ոչխարի հաշիւը եւ տարտարի ձգելով Ախլաթի գաւառի բոլոր հայ գիւղերու վրայ։ Աւդալը գաւառ, մոկանանուեց Աւդալ աղա։ Հայերը Աւդալ աղայի գողութիւններից ազատուելու համար միաչանուեցան, գնացին Մուշ միթէաէրիֆի մօտ եւ Աւդալ աղին ըրին գաւառական, զայմագամ, այդպիսով զայրը դրին պահապան ոչխարների վրայ։ Երկու տարի նա մնաց զայմագամ, որովհետեւ այն ատեն զայմագամները սկսեցին ուղղակի Պոլսէն նշանակիւ, եւ այդ երկու տարեայ ընթացքում նա կատարեալ տէր էր ամբողջ գաւառի հայերի կայքին, հարստութեան, նոյն իսկ ընտանիքին։ Ինչքան հարստութիւն, ինչքան ձիեր, կովեր, միւլքեր, իրրեւ բախշիշ, նա ցրեց։ Էլ ո՞ր ընտանիքի, ո՞ր աղջկայ պատիւը զոհ չգնաց տափտա քիւրդի անարդ կրքերին։

Աւդալը զրկեց իր պաշտօնից, զայմագամութիւնից, բայց ի՞նչ փոյթ։ Նրա ընտանիքը արդէն ունի ձեռն տուր բանեցնող 25 անդամներ, որոնք Ախլաթի կատարեալ տէրն են եւ կը թալանեն, ինչ կուզեն, կանեն, կոպանեն, ում կը ցանկանան, ան ու գոգի մէջ պահելով ամբողջ գաւառը։

Արդուլ աղայի, ճիշտն ասած, Ճանկոյի բաղմանդամ ընտանիքը բացառապէս թալանումներով, սպանութիւններով չէ զբաղւում նա պարապում է եւ պռեւտրով, արդիւնաբերութեամբ, որ ոչնչով պակաս չէ բացարձակ ազաղակութիւնից։ Բանը ահա թէ ինչումն է։ Այդ ընտանիքը տարէնը քանի մը անգամ ծխատոտ մէջ, կը ծախէ ծածկաբար։ որովհետեւ կառավարութեան կողմից արգիլած է ծխատոտ ծախելը, ուստի շատ անգամ բէժին խմանալով, աղքատ գիւղացիք կենթարկէ մեծ տուգանքի եւ կաշառք տալու, յաճախ նաեւ բանտարկութեան։ Բայց այդ չէ ցաւը։ Ճանկոնները իրենց բերած ծխախոտը միայն ծխողներուն չեն տալ, այլ իւրաքանչիւր ոտն բաժին մը կը զրկեն իրենց որոշումով, թէ ծխող լինին եւ թէ ո՛չ։ միեւնոյն ժամանակ իրանք նշանակելով ուղարկած ծխախոտի գինը, որի մասին հետ է գաղափար կազմել հետեւեալ հաշիւից։

Ծխախոտի օխան հինգ ղուռուշ արժէ։ Ճանկոնները մէկ օխան կը ծախեն երկու կոտ ցորենով, իսկ կոտ ցորենը արժէ 15 ղուրուշ։ ասել է՝ հինգ ղուռուշ արժէք ունեցող ծխախոտը կուտան 30 ղուռուշի։ Հիմա կիմնա՞ս, ընթերցող, թէ որ տեսակ աւազակութիւն, թալանում է այս։ Աւելացրէք դորա վրայ եւ այն, որ Ճանկոնները նոյն եղանակով առեւտուր են անում, բացի ծխախոտից եւ այլ կարգի կենսական մթերքներով եւ կը պարզէք, թէ ինչ գժոխային պատկեր է ներկայացնում հայերիս կեանքը Ախլաթի գաւառում, ինչպէս եւ ամենուրեք, Տաճկահայաստանում։ Եւ այդպէս, թալանել, կողոպտել հայ գիւղերը բացարձակ կամ անուղղակի ճանապարհներով, առեւտրի գիւմակի տակ,—ահա քիւրդ Ճանկոյի, ինչպէս եւ բոլոր քիւրդերի, գոյութեան նպատակը, ապրուստի միջոցը, եղանակը։ Ճանկոյի ընտանիքը իր այդ հարստահարութիւնների, թալանումների վրայ նայում է ոչ թէ որպէս անարդարութեան, այլ որպէս իրաւունքի վրայ, ընդունելով իրան, իրրեւ իշխան, պաշտպան, իսկ Ախլաթի գաւառի հայերին, որպէս իր հպատակներ, տարուկներ։ Այդ իսկ պատճառով նա պէտք է մշտապէս այն քիւրդերի հետ, որոնք կը կաղերեն կոիւ է մղում այն գիւղերի դէմ, որոնց թալանելու իրաւունքը վերապահուած է միայն իրան՝ Ճանկոյի ընտանիքին։ Համանման կռիւների ժամանակ տուժողը, վնասուողը դարձեալ մնում է գլխաւորապէս հայը, հայի գիւղը։ Ահա չաստերից մի թարմ օրինակ։ Ճանկոնների չորս հոգի՝ կամենալով ընդարձակել իրենց կամայական ինքնիշխանութեան սահմանը, եկան Ծ. գիւղը եւ նաստուրութիւն (գիւղի պահանջելիք) պահանջեցին։ Գիւղացիք չուզեցին Հասան-խանը երկու մարդով եկաւ նոյն գիւղը՝ նոյն պաշտօնը ուզելու։ Նոյն օրը եկան փիրմուզդի քրդերը եւ նոյն գործը պահանջեցին։ Աղքատ գիւղացիք արդէն սովալլուկ վիճակի մէջ էին, հայ չունէին, որ իրենք ուտէին, ուստի ոչ ոք չը բռնեցին, որպէս զի միւս կողմից եւ ոչ մէկին վիրաւորած չլինին եւ չթշնամացնին իրենց հետ։ Բայց իրենց Երեք տարեր տեսնելով եկող քրդերը՝ ապառնալիք ընելով, մեկնեցան Ծ. գիւղերէ եկող քրդերը՝ ապառնալիք ընելով, մեկնեցան Ծ. գիւղէն եւ ինչպէս որ ապառնալիք ըրին վնաս տալու գիւղացոց, այնպէս էլ կատարեցին Ճանկոնները եկան՝ գիւղի գոյոց, այնպէս էլ կատարեցին Ճանկոնները եկան՝ գիւղի գոյոց։ Մինչեւ տարեն 50 ոչխար հանելով, տարին։ Հասան-խան հինգ մարդով Բիթլիսի ճանապարհի վրայ, իրրեւ աւազակներ սպասեց, մինչեւ որ Ծ. գիւղացիք Բիթլիս գացին եւ վերադառնալիս, երբ Կ. Պոլսէն իրենց պանդուխտներէն ստակ եկած էր՝ կը բերէին, թէ այդ ստակը, թէ երկու բեռ ուրիշ ապրանք եւ թէ երեք մարդոց հանդերձներ կողոպտելով, անհետացան՝ թալանելով գիւղացոց 30 ոսկիի չափ։ փիրմուզդիք փորձեցին դաշտէն եղներ յափշտակելու եւ յաջողեցրին միայն երեքը տանել, մնացածները թողնել փախչելով։ Սակայն այս երեք խումբերը իրենց չարիքը գործելէն յետոյ հունձքի ժամանակը նորէն զատ-զատ եկան գիւղը եւ իրենց համար պէտք եղած ցորենը, գարին տարան, խոստանալով այլ եւս չվնասել գիւղին, որ, հարկաւ, հաւատալու բան չէ եւ օրին չեն հաւատում ոչ իրանք թալանողները եւ ոչ էլ թալանուող խեղճ, աղքատ հայ գիւղացիք։ Քիւրդերից պակաս չեն հարստահարում մեզ տէրութեան զօրքերը։

Հարկահաւաք զապթիեները միշտ անպակաս են գիւղերէն. սրանց թիւը երեքէն ութի կը հասնի եւ շատ անգամ 10 օրից մինչեւ 1 ամիս կը կենան գիւղի մէջ։ դոցա եւ դոցա ասիկանների ուտելիք, ձիերու յարդը, խոտը, գարին ձրի կտրի։ էլ ոչխար, հաւ չի մնալ, որ չմորթուին, իւղ, մեղր, ձու չմնալ, որ չհաւաքուին։ Այդ բաւական չէ։ շատ թէ քիչ կարող մարդկանցից կաշառք վերցնելու նպատակով, երբեմն ծխախոտ, երբեմն ղէնք, երբեմն էլ ռուսահպատակ հայ փնտռելու պատրուակով կը մտնեն տները եւ իրենց անզթութիւններովը սարսափ կը սարածեն անցեալները Ծ. գիւղի բնակիչ Վարդան-Քեամիլ անձ մը յանկարծ շրջապատուած տեսնելով տունը կատաղի ասիկաններով, խենթացաւ, իսկ կին մը զուտակ վիժեցաւ։

Մանաւանդ շատ նեղութիւններ կտայ գաւառիս Սաքար կոչուած գօրքը։ Սմառս գոցանից 10 հատ զինուոր եւ մի չաւուշ եկան հոս եւ սաստիկ ծեծելով ռէս Ծ., առին 30 գահեկան կաշառք, ապա „յեղափոխական մը“ փնտռելու պրնակով մտան մի քանի հարուստ տներ եւ մասամբ կապիակով մասն մի քանի հարուստ տներ եւ մասամբ կողոպտելով այդ տները, 5 սայլաւոր ձրի բռնած՝ մեկնեցան Ս. հայաբնակ գիւղը, ուր սկսեցին աջ ու ձախ հայհոյելով „գեաւուրներին“-հայերին, կողոպտել տները.., ռէս Գ. չկրցաւ տանել այդ անզթութիւնները եւ սպառնաց „կառավարութեան իմաց տալ“։ Զինուորները պատրուակ մը ունենալու համար յայտարարեցին, որ իրենց մեծաւորի քսակն 5 ոսկի մէջն հոս ընկած է, ուստի իրենք կչրջեն տները ան գտնելու համար եւ ուրուհետեւ ռէսը գիմադրութիւն ցոյց կտայ, ասել է, կամ ինքն է վերցրել, կամ անհնազանդ յեղափոխական մըն է,

ուստի պէտք է պատժել եւ սկսեցին խեղճին խիստ դաժանակոծել։ Ոչ-ը հեռագայ չարիքներից եւ մեղադրանքներից ազատելու համար, չտալով Ալլահի կառավարութեան բացատրութիւն տալու եւ պատմեց զօրքերի անգթութիւնները. բայց մի՞թէ սուլթանի զօրքին կարելի է պատժել օրէնքով...

Ասքար զօրքի մարդիկ նոր էին հեռացել գիւղից, երբ ներս մտան աշխատաւորի զօրքերը. գոքա ամբողջ օրը կեր ու խումանելով եւ հազար ու մի մոգոնած զրպարտութիւններով ու սպառնալիքներով սրանից ու նրանից կաշառք վերցնելով, իրիկունը պաքչին (գիւղից տուած սպասաւոր) հրամայեցին „կնիկ“ մը բերել իրանց քովը գիշերելու համար։ Պաքչին կը յայտնէ, որ „վատ վարքի“ կին իրենց գիւղում չկայ. զօրքերը խիստ կը ծեծեն խեղճին եւ կսպառնան, որ եթէ այլ կին բերել չկարողանայ՝ պարտաւոր է իր կինը բերել։ Սպասաւոր Կարապետը ճարահատեալ „կին մը“ գտնելու պատրւակով դուրս կուգայ գիւղից եւ յետ չի դառնալ. զօրքերը մինչ առաւօտ սպասելով եւ կրտնելով իրենց խաբուած, կը մտնեն տները եւ յայտնելով, որ իրենց այդ ճանապարհորդութիւնների եւ անհանգստութիւնների պատճառը ապստամբ հայերն են, որ Սասունի դէպքում կոտորեցին իրենց ընկեր զինուորներին, կը յարձակին գիւղի վրայ եւ ով ինչի կը հասնի, կը թալանին, կը կողոպտին. ո՞վ կարող է դիմադրել նրանց. խեղճ գիւղացիք ան ու դողի մէջ ծնկաչոք կը խնդրէին անգութ զօրքերից գոնէ մնալ վերցրած կաշառքներով, կողոպուտներով եւ թողնել գիւղը... Բայց ո՞վ չգիտէ, որ նրանց հեռանալով գիւղ կը մտնեն սուլթանի այլ կարգի զօրքեր եւ կսկսեն նոյն անգթութիւնները, անգթութիւններ, որ իրենց գագաթնակէտին են հասել Սասունի դէպքերից յետոյ, մանաւանդ վերջին ժամանակները, երբ Եւրոպական միջամտութիւնը դրական արդիւնք չէ ցոյց տալիս...

ՏԵՐՐՕՐԻՍՏԱԿԱՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(ՄԵՐ ԿՕՄԻՏԷՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԾԸ)

ՏՐԱՊԻԶՈՆ

ԲԱՀՐԻ ՓԱՇԱՅԻ

Ի

ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՓԱՇԱՅԻ

ՎԻՐԱՒՈՐԻԼԸ

„Հոկտեմբերի 2 (Ն. տ.), երեկոյեան ժամը 5-ին Տրապիզոնում դաշնակցական երկու ահաբեկիչների ձեռքով Վանի կուսակալ ԲԱՀՐԻ ՓԱՇԱՅԻ վրայ սպանութեան փորձ փորձեցաւ. 4-5 դնդակ արձակեցաւ։ Բահրի փաշան և տեղւոյն զինուորական հրամանատար փաշան թեթև կերպով վիրաւորուած են։ Ահաբեկիչները ազատ ու ապահով են։

Հայ ժողովուրդը ողեւորուած է, կառավարութիւնը կատաղած“։

* * *

Նոյն գիշեր մեր ահաբեկիչները տեղափոխուելու ատեն խումբ մը թուրք խուժանի կը հանդիպի և լուսնի լուսով կը ճանչուին. խուժանը կը յարձակի բռնել զանոնք. մեր հերոսները կը դառնան և կը գնդակեն. ծանօթ և անուանի սրիկա մը՝ Թավաճօղլիի տղան կուրծքէն կը վիրաւորուի մահամերձ. ուրիշ զինուոր մը ալ կը վիրաւորուի։ Մերոնք յաջողութեամբ կազատուին։

ՎԱՆ

Սեպտեմբերի 3-ին Վանի մէջ, Դաշնակցական Կոմիտէի որոշմամբ, 4 հոգի գիշերով յարձակուել են մի տաճիկ ՀԱԲԻԻԲԱՊԵՏԻ վրայ—պարտէզի մէջ, վրանում եղած միջոցին։ Նրա յանցանքն այն է, որ եղել է Սասունի կոտորածի հերոսներից մէկը, առևանգել է մի հայ աղջիկ և վերցրել իր մօտ՝ իբրև հարճ...

Գնացողների նպատակն է եղել սպանել Հարիւրապետին և ազատել հայ աղջկան։ Բայց այդ բանը նրանց չի յաջողել։ Հարիւրապետին միայն վիրաւորել են երեք գնդակով, իսկ աղջիկը այդ գիշեր բացակայ է եղել վրանից։ Մանրամասնութիւնները շուտով։

Վասպուրականի դաշնակցական հայդուկային խումբը դարձեալ կռուի է բռնուել քիւրդերի հետ. ըսպանուել է քիւրդերին խառնուած և նրանց աջակցող միակ վատանուն հայը։

ՄՈՒՇ

Ահաւասիկ յեղափոխական գնդակ մը ևս հայ մատնիչի կուրծքին մէջ։

Մշոյ յեղափոխականներու ձեռամբ զարնուեցաւ նշանաւոր մատնիչ և դաւաճան ՏԷՐ ԲԱՐՍԵՂ

ՔԱՂԱՆԱՆ, որ երկար ատենէ ի վեր կառավարութեան գործին մէջ արժանաւոր պաշտօնեայ մը էր։ Ջարկումը տեղի ունեցաւ Մոկունք գիւղի վերև, գիւղէն հինգ վայրկեան հեռի, իսկ Մուշէն քսան վայրկեան դէպի այգեստան։ Զորս անձինք յարձակւած էին վրան, առանց պատեհութիւն կորսնցունելու երեք հարւածներ գլխուն իջեցուցած էին. այդպիսով տապալեցին այդ անպիտան դաւաճան հրէշը, որ ամբողջ Մշոյ ժողովուրդ թշւառացրեր էր այս քանի տարիներու ընթացքում։ Ջառնողները աներևոյթ եղան, իսկ գարշելու դիակը մինչև առաւօտ արիւնաթաթախ գետին մնացած էր։ Իր ընկերներ առաւօտեան լուր կուտան կառավարութեան, թէ ձեր սիրելի բարեկամին սատկած դիակը Մոկունք գիւղէն վեր կը գտնւի. կառավարութիւն իր պաշտօնեաներով և հեծեալ զապթիաներով դէպքին վայրը կերթայ։ Ստիպեալ գիւղի ռէս, իրան երեք ընկերակիցներ և գիւղէն երկու ալ ուրիշ անձինքներ տարին իրենց հետ ի Մուշ, նաև Մուշէն ալ չորս անձինքներ։ Սկսան նոյնպէս անմեղ գիւղացիներ ձերբակալել և ձերբակալութիւնք տակաւին կը շարունակւին։

ԿԱՐԻՆ

—

Հոկտեմբերի 5-ին (ն. տ.) երեկոյեան ժամ 6-7-ին Կարնոյ բազմամարդ փողոցներից մէկում՝ Կանա Ճամբայ կոչւող ճանապարհի վրայ Հայ Յեղ. Դաշնակցութեան դաշոյնը վարձատրեց յայտնի մատնիչ փաստաբան ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆԻՆ։

Ձերբակալւած և բանտարկւած են անմեղ հայեր։ Այս դէպքին, ցաւօք սրտի կաւելացնենք, զոհւեց կարնեցի վաճառական Սիմէօն Պետոյեան, բոլորովին անմեղ, որին թէև ազդարարեցին հեռանալ, բայց սա՝ իբրև օգնութեան գալով Տէր-Սարգսեանին, փուում է սորա կողքին։ Մանրամասնութիւնք յետոյ։

Վանի նախկին նահանգապետ Բահրի փաշայի և Տրապիզոնի զինւորական հրամանատար Ֆէրիգ փաշայի վիրաւորման լուրը, որ ստացանք անցեալ ամսի 17-ին (ն. տ.), անմիջապէս տպագրելով առանձին թերթերի վրայ, ցրւեցինք։ Իսկ Վան, Մուշ, Կարին տեղի ունեցած տերրորիստական գործողութիւնների մասին մեր Կոմիտէների հաղորդածները նոյնպէս առանձին թերթիկների վրայ տպագրելով, ցրւեցինք նոյն ամսի 29-ին (ն. տ.)։

ՆՒԻՐԱՏՒՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Հ. Յեղ. Դաշնակց. կեդր. սնդուկի մէջ ստացւեցան.

Մխիթար Բագրատունի 50 օսմ. ոսկի, Արք. 10 օսմ. ոսկի, Վեհանձն 1350 ռուբլի։

Կ. Պոլսի կեդր. սնդուկի մէջ Օձ քղ. ստացւեցան.

Արծիւ 40 դահեկան, Արև 32 դհ., Փոթորիկ 40 դհ., Փ. Ք. 10 դհ, Յոյս 10 դհ., Դ. Ք. 10 դհ., Երկաթ 10 դհ., Շ.-ն 10 դհ., Մ. Կ. 28 դհ., Ս. Ա. 54 դհ., Ա. Թ. 60 դհ., Աշխատող 216 դհ., Ջ.-Շ. 109 դհ., Բլուր-Առիւծ 50 դհ., Հատուխ. 80 դհ., Ածոխ 30 դհ.։

Արշակաւան քղ. կեդր. սնդուկի մէջ ստացւեցան.

Ուժանակ 30 դհ., Օշին 25 դհ., Արտաշ 15 դհ., Տալուրիկ 50 դհ., Ենիչերի խ. 60 եւ 55 դհ., Արշալյր 60 դհ., Հրահատ 30 դհ., Սիսակ 50 դհ.։

Պիծակ խ. 60 դհ., Մամիկոնեան խ. 60 դհ., Հրահատ 10 դհ., Սրտագիր խ. 50 դհ., Շաքէ խ., 200 դհ., Կրակ խ. 75 դհ., Վանական 20 դհ., Ալէկ 20 դհ., Կամք խ. 20 դհ., Զեփիւռ 10 ու կէս դհ., Ուժանակ խ. 15 դհ.։

Նիզակ քաղաքի սնդուկի մէջ ստացւեցան.

Թորոս Մանուկ 3 օսմ. ոսկի, Մարտիրոս 3 օսմ. ոսկի, Յ. Ս. Շ. 20 օսմ. ոսկի, Գ. Բ. Շ. 20 օսմ. ոսկի, Կեսար. Մ. Կ. 60 մէճիտ արծաթ, 4 ոսկի գաղղ., 18 ոսկի անգղ., 5 ոսկի օսմ. թղթադրամ, Անվախ խումբ 60 դհ., Մագսուտ Կարապետ 10 օսմ. ոսկի։

Վիշապ քաղաքի կեդր. սնդուկի մէջ ստացւած են.

Օձ քաղաքէն՝ Թնդանօթ 32 և կէս դահեկ., Շանթ 35 դհ., Կորիճ 24 դհ., Արծիւ 40 դհ., Թռչքատեաց 54 դհ., Օճառ 324 դհ., Խոյ 108 դհ., Վահէ 80 դհ., Կ. Յ. 108 դհ., Վահագն 20 դհ.

Ք. Ռ. 200 դհ., Սև-Կարմիր 134 և 3 քառորդ դհ., Գ. Անձնւէր 30 դհ., Ն. Խ. 10 դհ., Ա. Բ. 10 դհ., Ռ. Հ. 10 դհ., Մուշեղ 5 օսմ. ոսկի, Փայլակ 3 օսմ. ոսկի։

Մասիս 50 դհ., Յառաջդիմասէր 100 դհ., Կայծ ու Բոց 30 դհ., Սէր 20 դհ., Կ. Ռ. Մ. 15 դհ.։

Արմէնուհի 35 դհ., Ջրվէժ 120 դհ., Հզօր 45 դհ., Ա. Բ. Գ. 10 դհ., Արարատ 50 դհ., Օվակ 20 դհ., Քաջ 40 դհ., Մանիշակ 27 ու կէս դհ., Արթուն 20 դհ., Արծիւ 40 դհ., Տ. Գ. Մ. 261 դհ., Զկնորս 27 դհ., Մամիկոնեան 10 դհ., Յ. Ր. 20 դհ.։

Թաթար-Բազարջիկի „Մատեան“ գնդից Ն. Մ.-ի միջոցով 60 ֆր.։

Շվ. Ժ. Ք. Ա. 10 ֆր., Թ. 15 ֆր.։

Միացեալ Նահանգ. Ֆօլ-Րիվէր ք-էց Ն. Մ. Ճ. 4 շէլ. և 2 պէննի, Վայթինսւիլ՝ Յ. Մ. Գրանկեան 1 դօլ.։

Դաշնակցութեան անծանօթներից խնդրւում է թղթակցութեան և նւիրատւութեան համար դիմել.

Gaspar, poste restante, Carouge (Suisse).

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան։